

# ԱՐՁԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ

ՕՊԵՐԱ 4 ԴՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ՀԵղինակ՝ ԻՒԶԵՒՐ ԲԵԿ ՀԱԶԻՔԵԿՈՎ  
Թարգմանիչ՝ Ա. ՎՐՈՅՔ

(Այս թարգմանութեանը հեղինակը հասանել է եւ  
տեղի իրա յատուկ թոյլտովթիւնը)

Թ. ՏՊԱԳ-ՐՈՒԹԻՒՆ



Թ Ե Ֆ Լ Ի Ս

Տպ. «ՄԱՍՈՒԻԼ» Հօրիս-Մելիքեան Գող. № 22.  
19 Ժ Շ Բ.

# ԱՐՃԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ

37

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՍԿԵԱՐ, — Կը իտասարդ հարուստ վաճառական  
ԶԱՀԱՆ, — Նրա մօքաքոյրը, (լսալան) գեր կին  
ՍՈՒԼՅՅՄԱՆ, — Ասկեարի ընկերը  
ՎԵԼԻ, — Ասկեարի ծառան  
ՍՈՒԼԹԱՆ ԲԵԿ, — Կալուածատէր, տարիքով  
ԳԻՒԼՉՈՀՐԱ, — Սուլթան բէկի աղջիկը  
ԱՍԵԱ, — Սուլթան բէկի եղբօր աղջիկը  
ԹԷԼԼԻ, — Սուլթան բէկի աղախինը

ԴՐԱՄԱՐԱՆ

ՏԱՐԱՆ 19498

# ԱՐՃԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Տեսաբանը ներկայացնում է Ասկեարի առնը հարուստ կտնօւսքոծ  
մի սենեակ:

1.) Ասկեար, Զահան եւ Վէլի.

ԱՍԿԵԱՐ.—Երգում է բայաթի Շիրազ.)

Աշխարհ լցրեց իմ ձայնը լացի,  
Անընկեր, մենակ, տիսուր մնացի,  
Եւ միշտ պիտի լամ, թէ ինձ կտրատեն,  
Ամբողջ մարմինս, անդամահատեն:

Գիտեմ անվիշտ ես, և իմ սիրեկան,  
Եւ դու գարձրիր ինձ թափառական,  
Ոչինչ, դու ապրիր, ուրախ անխոռով,  
Իսկ ես թող միշտ լամ, աանջուեմ ցաւով:

ԶԱՀԱՆ.—Մօրքաքոյրեդ քեզ մատաղ լինի, ի՞նչ է պատահել որ այդպէս տրտում տիսուր երգում ես.  
լսողի սիրտն է այրում:

ԱՍԿԵԱՐ.—Եթէ սիրտը այրում է, նշանակում է դու գթոս սիրտ ունես, այ մօրքուր:

ԶԱՀԱՆ.—Ասածդ չհասկացայ. մօրքուրդ քեզ մատաղ լինի, կրկնիր որ հասկանամ:

ԱՍԿԵԱՐ.—Մի այսպիսի ահապահանալի բան չասեցի,

որ կրկնելու կարիք լինի. հիմի դու ինձ լսիր,  
այ մօրքուր. մի ինձ ասա տեսնեմ. աշխարհը ո՞ր  
այսպէս գայ ու այսպէս էլ գնա, սրա վերջս ու  
մեր գործը ի՞նչ է լինելու:

ԶԱՀԱՆ.—Մօրքուրդ քեզ մատաղ լինի. փառք Աստու-  
ծոյ աշխարհին ի՞նչ է պատահել:

ԱՍԿԵԱՐ.—Իմ ասելս էն է, որ այս բոլորը ի՞նչով է  
վերջանալու: Օրինակի համար, մենք այսպէս հա-  
սակ ասանք, մեծացանք, փառք Աստուծոյ, ապ-  
րանք ու կարողութիւն կայ, բայց այս բոլորով  
հանդերձ մարդու կեանքը կատարեալ չէ լինում  
և գարձեալ մի բանի պակասութիւն է զգացւում.  
Ճիշտ չէ ասածս:

ԶԱՀԱՆ.—Մօրքուրդ քեզ մատաղ, ի հարկէ ուղիղ ես  
ասում, այնուամենայնիւ ասածներիցգ դարձեալ  
բան չկարողացայ հասկանալ:

ԱՍԿԵԱՐ.—Պարզ է ասածս, այ մօրքուր, ճշմարիտը  
խօսելով, այս ու այն կողմ նայելով տեսնում եմ,  
որ մի բան ինձ պակասում է:

ԶԱՀԱՆ.—Եթէ մի պակաս բան կայ, ծառային ուղար-  
կիր՝ շուկայից թող առնէ բերէ. ի՞նչ մտածելու  
բան կայ, այստեղ:

ԱՍԿԵԱՐ.—Դու իմ ասածը չես հասկանում. ես քեզ մի  
լուրջ բանի մասին եմ ասում, իսկ դու շուկա-  
յից ես խօսում: Իմ ասածս այն է, որ այս թա-  
փառաշրջիկ կեանքի վախճանը ուր է համնելու:  
Փող ու ապրանք ունեմ, բայց փողաաէրը պէտք  
է մի ուրիշ բանի էլ տէրը լինի, մինչդեռ տես-  
նում ես, բոլորովին անփող մարդիկ ոչխարի մի  
հօտի չափ ունեն նրանցից:

ԶԱՀԱՆ.—Մօրքուրդ քեզ մատաղ, դու վաճառական  
մարդ, ոչխարի հօտը ի՞նչ ես անում:

ԱՍԿԵԱՐ.—Օք մօրքաքուրիկ, էլի չհասկացար թէ ի՞նչ  
եմ ուղում:

ՎԵԼԻ — (Յանկարծ) ես իմանում եմ աղայի ուզածը:  
ԱՍ ԵԱՐ.—Այ տղայ, դու էլ ես այստեղ. դէ ասա տես-  
նեմ, թնչ է իմ ուզածը:

ՎԵԼԻ.—(Քծնելով) ես իմանում եմ քո ուզածը:  
ԱՍ ԵԱՐ.—Դէ որ գիտես ասա. էլ թնչը ես  
սպասում:

ՎԵԼԻ — (Յանկարծ հոհուալով արագ փախչում է. իսկ  
Ասկեարը՝ ժպտում)

ԶԱՅԱՆ.—Կարծես ծառան գժուել է: Մօրքուրդ քեզ մա-  
տաղ, ինձ մի լաւ հասկցըրու տեսնեմ թէ թնչ  
է ուզածդ:

ԱՊԿԵԱՐ.—Այ մօրքուր, ինձ լսիր, քո կարծիքով ես  
քանի տարի կան կը լինեմ:

ԶԱՅԱՆ.—Այս ոամոզան ամբողը չէ, այլ յաջորդ տար-  
ւայ ոամազանը գալ ու անցնելուց յետոյ 28 տա-  
րիդ կըլրոցնես: Բայց թնչի ես դարդ անում, դու  
դեռ երեխայ ես և հարիւր տարի կարող ես ա-  
պրել:

ԱՍԿԵԱՐ.—Տարօրինակ բան, որքան էլ որ երեխայ  
լինեմ, այնուամենայնիւ ոտքի վրայ կարող եմ  
կանգնել:

## 2.) Նոյնը եւ ՎԵԼԻ

ՎԵԼԻ.—(Մտնելով նախկին դիրքով կանգնում է):

ԶԱՅԱՆ.—Ի հարկէ որ կարող ես կանգնել, փառք Աս-  
տուծոյ, քաջառողջ երիտասարդ ես:

ԱՍԿԵԱՐ.—Լաւ, ուրիշն այդ քաջառողջ երիտասարդը  
թնչ անէ. միայն ուտէ և քնէ:

ԶԱՅԱՆ.—Ասկեարը, թէ Աստուծդ կաիրես, որի ինձ  
հետ պարզ լեզուով խօսիր, որ ես էլ մի բան  
հասկանամ. չէ որ ես մի պարզ կին եմ. մօրա-  
քոյրը քեզ մատաղ. միթէ ես աբաբերէն կարող  
եմ հասկանալ:

ԱՍԿԵԱՐ.—(Մեկուսի) Է՞ս, էլ ամաչելու աեղը չէ.  
(Քահանին) Գիտես ինչ կայ, մօրքուր, ես կամե-  
նում եմ ամուսնանալ, կին առնել, կինք

ՎԵԼԻ.—Չէ որ ես ասում էի:

ԶԱՅԱՆ.—Մօրքուրդ քո ցաւդ տանի. էլ թւր ես շուռ  
ու մուռ տալիս, այդպէս ասա, որ ես էլ բան  
հասկանամ:

ԱՍԿԵԱՐ.—Այն, ուրիշն իմացիր, որ ամուսնանալ ես  
կամենում:

ԶԱՅԱՆ.—Եւ շատ էլ լաւ ես անում, մօրքուրը քեզ  
մատաղ լինի: Աստուծ ինձ արժանացնէ այն  
օրին, որ ես արժանանամ քո հարսանիքին պա-  
րել: (Վէլին մտնում է) Տես, Ասկեար, մօրքու-  
րը քեզ մատաղ, վերջ ի վերջոյ դու էլի իմ խօս-  
քին եկար. քանի ժամանակ է, որ քեզ ասում եմ,  
Ասկեար, արի ամուսնացիր, առւն ու տեղի տէր  
եղիր, բայց ինչ օգուտ, որ դու ինձ չէիր լսում:  
Ի հարկէ. կին ուզիր և հարսանիքովդ թող բարե-  
կամերդ ուրախանան, իսկ թշնամիներդ խոր-  
ակւեն: (Վէլին ա'խ է քաշում) Ուզում ես հէնց  
էս օրուանից քեզ համար կը զնամ աղջիկ վընա-  
ռելու Հանգուցեալ քոյրս, մինչև հոգին աւան-  
դելը ասում էր «Ճահան, տես. Ասկեարին քեզ  
եմ յանձնում, գնում եմ, նրան միայնակ մի թող-  
նիր, ամուսնացըրու... (լալիս է, Վէլին խորը ախ  
է քաշում),

ԱՍԿԵԱՐ.—Դէ, այստեղ լալու բան չկայ, մի անգամ  
որ խօսը բացւելէ, տեսնենք վերջը թւր է գնում:

ԶԱՅԱՆ.—Մօրքուրդ քեզ մատաղ, ամուսնացիր:

ԱՍԿԵԱՐ.—Բայց ես ինչպէս սմուսնանամ, ամուսնու-  
թիւնը այնքան էլ հեշտ գործ չէ:

ԶԱՅԱՆ.—Մօրքուրը քեզ մատաղ, ամուսնացըր ջուր  
խմելու պէս հեշտ բան է. թնչ գժւարութիւն  
կայ այդտեղ. փոռք Աստուծոյ, թէ երիտասարդ

ես, թէ փող ունես և թէ կարողութիւն. Աստւած է վկայ, թագաւորի աղջկանն էլ ուղենամ՝ քեզ կտայ: Այստեղ երկար մտածելու բան չկայ. թող հէնց այսօր չաղըըս դլիմիս դցեմ գնամ քեզ համար աղջիկ ընարեմ. և եթէ կամենսւմ ես՝ ինքդ ինձ ասա, որ բէկի կամ վաճառականի աղջկան ուղում ես, գնամ քեզ համար առնեմ:

**ԱՍԿԵԱՐ.**—Բայց ես ի՞նչ գիտենամ թէ որ բէկի կամ վաճառականի աղջիկն է լաւը, որ ասեմ գնա ուղիր՝ քանի որ ինքս չեմ տեսել նրանց:

**ԶԱՀԱՆ.**—Վահ, մօրքուրը քեզ մատաղ լինի, ապա իմ աշքերը կժյր են. Աստւած է վկայ, կերթամ ման կուգամ, կը գնարեմ, կը նայեմ, կը ջոկեմ և մի այնպիսի աղջրկ կարեմ, այնպիսի աղջիկ՝ որ մարդ նայելիս խելքը գնայ:

**ԱԾԿԵԱՐ.**—(*ծիծաղելով*) Այ մօրքուր, եթէ այդպէս լինի, ուրեմն իմ էլ խելքս կըդնայ ու խելագար կը լինեմ: Ոչ մօրքուրս, ես դրան համաձայն չեմ. աղջիկը պէտք է որ ես ինքս տեսնեմ, եթէ հաւանեցայ՝ կառնեմ, իսկ եթէ ոչ՝ չեմ առնի:

**ԶԱՀԱՆ.**—Ապա դու տղամարդ տեղովդ աղջկան ինչպէս ես տեսնելու. միթէ քեզ աղջիկ ցոյց կը տան:

**ԱԾԿԵԱՐ.**—Բանը հէնց գրանումն է, որ առաւօտւանից քեզ ասում եմ. թէ սրա վերջը ի՞նչ է լինելու: Ամուսնանալ եմ ուղում, բայց չգիտեմ թէ մւմ առնեմ. որովհետեւ ոչ ոքի չեմ տեսել և տեսնելու էլ հնար չկայ:

**ԶԱՀԱՆ.**—Այ, մօրքուրը քեզ մատաղ լինի, դու արի քո պապերի ճանապարհով ամուսնացիր. քո ի՞նչ գործն է. ես գնամ քեզ համար աղջիկ առնեմ, եթէ վատը լինի՝ մեղքդ ընքիս:

**ԱԾԿԵԱՐ.**— Այ մօրքուր, ի՞նչ ես կարծում, արշինը երկու շահանոց չիթը առանց տեսնելու չեմ

առնում. եթէ մեր պապերի ճանապարհով ամուսնամ՝ շարունակ պէտք է կին առնեմ—արձակեմ, կին առնեմ—արձակեմ՝ մինչև որ մէկը ինձ դուր գայ ու մնայ... ոչ, ես այդ ձևով չեմ կամենում ամուսնանալ. եթէ հնարագէտ ես, ինձ մի միջոց գտիր որ նախ աղջկան կարողանաստ տեսնել և ապա առնել:

**ԶԱՀԱՆ.**—Մօրքուրը քեզ մատաղ լինի, ես ի՞նչ միջոց կարող եմ ցոյց տալ. եթէ կին լինէիր՝ քեզ տնէ տուն կը ման ածէի:

**ԱԾԿԵԱՐ.**—(*ժպտալով*) Եթէ կին լինէի խօ կին չէի ուզի...

Վէկի. —Ա՛խ:

**ԶԱՀԱՆ.**—Ուրեմն ինչպէս անհնք

**ԱԾԿԵԱՐ.**—Ես էլ հէնց այդ եմ մտածում թէ ինչպէս անհնք:

Վէկի. —Ա՛խ...

### 3.) Նոյնը եւ Սիւլէյման

**ՍԻՒԼԷՅՄԱՆ.**—Բարե ձեզ. հ՛ը. Զահան մօրաքոյր, քէֆդ ինչպէս է, ժաժումաժ գալիս ես թէ չէ: Վէկի, դռւ ինչպէս ես:

**ԶԱՀԱՆ.**—Փառք Աստուծոյ, Սիւլէյման:

Վէկի. —Շատ ապրես, բէկ:

**ՍԻՒԼԷՅՄ.**— Ասա, ի՞նչ վիշտ ունես, { 2  
ի՞նչ հոգս, ցաւ ու տիրութիւն, { 2

Մըտածկոտ տեսք ունես { 2

Պատել է քեզ տրտմութիւն: { 2

Մի ամաչիր, ասա,

Շուտով քո վիշտը մեզի,

Տեսնենք ի՞նչ ցաւ է սա,

Որ պաշարել է քեզի:

Այս աշխարհում չը կայ,  
Ճաւ ու վիշտ երկարատե.  
Ամենայն ինչ կանցնի,  
Կը ծագէ քեզ նոր արե:  
Միթէ դու չես լսած  
Որ կայ այսպիսի առած,  
Ով ինչ փափաք ունի—  
Նա անպատճառ կը գտնի:

(Ասկեարին) Այ մարդ, քեզ Բնչ է պատահել, որ  
սպաւորի նման այգպէս նստել ես. գուցէ աշ-  
խարհիս ցաւը քեզ են տւել:

**ԱՍԿԵԱՐ.**—Միւլէյման, շատ լաւ արիր որ եկար. Ա-  
սում են դու մի շատ խելօք մարդ ես, տեսնենք  
դժու ինչ խորհուրդ ես տալիս:

**ՍԻՒԼԷՅ.**—Ուրեմն ինքու հաւատացած չեմ, որ ես խե-  
լօք եմ:

**ԱՍԿԵԱՐ.**—Հաւատում եմ, բայց եթէ դու քո խոր-  
հուրդը տաս, այն ժամանակ աւելի ևս կը հա-  
ւատամ:

**ՍԻՒԼԷՅ.**—Դէս մի առ մի պատմիր տեսնեմ Բնչ է  
պատահել:

**ԱՍԿԵԱՐ.**—Ի՞նչ պէտք է պատահի. ես այն եմ մտա-  
ծում որ եթէ աշխարհը այսպէս եկել ու այսպէս  
էլ գնա, որա վերջը Բնչ է լինելու...

**ՍԻՒԼԷՅ**—(*Ընդհատելով*) Կաց, ուզածդ իմացայ:

**ԱՍԿԵԱՐ.**—Ի՞նչ է ուզածս:

**ՍԻՒԼԷՅ.**—Ի հարկէ, դու ուզում ես կին տոնել:

**ԱՍԿԵԱՐ.**—Բահ. ինչից իմացար:

**ՍԻՒԼԷՅ.**—Երեսիցդ իմացայ. այդ հասկանալը մի  
դժւար բան չէ. հ'ը, Զահան մօրքոյր, այգպէս է  
թէ ոչ:

**ԶԱՀԱՆ.**—Ճաւդ տանեմ, ի հարկէ որ այգպէս է:

**ՍԻՒԼԷՅ.**—(*Վելիին*) Այգպէս է, թէ ոչ:

**ՎԵԼԻ.**—Ի հարկէ այգպէս է, բէկ:

**ՍԻՒԼԷՅ.**—Հիմի համոզւեցար, որ խելացի եմ:

**ԱՍԿԵԱՐ.**—Կիսով չափ համոզւեցի. Բայց բարեկամ, հի-  
մայ մի խնդիր էլ կայ: Եթէ դու այդ էլ կարո-  
ղացար լուծել, այն ժամանակ կը համոզուեմ,  
որ գլխից մինչև ոտքերդ խելք ես:

**ՍԻՒԼԷՅՄ.**—Դէ, մէկ-մէկ ասա տեսնեմ, լսում եմ:

**ԱՍԿԵԱՐ.**—Տես Միւլէյման, ես այն համոզմունքն եմ,  
որ աղջկ առնելը ապրանք առնելու պէս մի  
բան է. ինչպէս որ ապրանքի լաւն ու վատը  
կայ...

**ՍԻՒԼԷՅ.**—Կաց, իմացայ թէ Բնչ է ուզածդ...

**ԱՍԿԵԱՐ.**—Ուրեմն Բնչ է ուզածս...

**ՍԻՒԼԷՅ.**—Ուզում ես, որ նախաղջկան տեսնես և յետոյ  
առնես:

**ԱՍԿԵԱՐ.**—(*Զարմացած*) Բայց դու ինչպէս հասկացար:  
ՍԻՒԼԷՅ. —Հէնց որ բերանդ բաց արիր. աղտակ չհասկա-  
նալու Բնչ կայ: Այգպէս է, թէ ոչ մօրքնուր:

**ԶԱՀԱՆ.**—Ճաւդ տանեմ, ի հարկէ որ այգպէս է:

**ՍԻՒԼԷՅ.**—Հիմի հասկացար, որ գլխից մինչև ոտքերս  
խելք եմ:

**ԱՍԿԵԱՐ.**—Քիչէ մնացել. Եթէ մի բան կայ, այն էլ իմտ-  
նաս, այն ժամանակ հաւատքս կատարեալ կըլինի:

**ՍԻՒԼԷՅ.**—Մի առ մի ասա, լսենք:

**ԱՍԿԵԱՐ.**—Շատ լաւ, այ խելօք տղայ: Հիմի ես աղջկան  
ինչպէս տեսնեմ, որ կարողանամ համոզուել թէ  
նա ինձ յարմար է թէ ոչ:

**ՍԻՒԼԷՅ.**—Դրանից հեշտ Բնչ կայ, շորերդ փոխիր հինը  
հագիր, չիթ-միդ ինչ որ պատահի առ թեփդ  
տակ, ձեռքիդ էլ վերցրու մի արշին, յետոյ դունէ  
գուռ ընկիր, ըրջիր ու արշին մալ ժախիր, և  
այդպիսով տեսած աղջիկներիցդ մէկն ու մէկը  
ջոկիր, քու կողմից ինձ ուզարկիր, գրծը զլուե  
բերեմ պրծնի գնա:

**ԱՍԿԵԱՐ.**—Զարմանալի միտք է, Աստուածս վկայ:

**ԶԱՀԱՆ.**—Ճաւդ տանեմ, ի հարկէ որ լաւ միտք է:

**ԱՍԿԵԱՐ.**—Էլ ուրիշ հնար չկայ. այսպէս է թէ ոչ,  
մօրքնւր:

**ԶԱՀԱՆ.**—Ցաւդ տանեմ, ի հարկէ որ այդպէս է:

**ԱՍԿԵԱՐ.**—Խելացի ես, եղբայր, խելացի ես: Աստուած  
վկայ ասածիդ պէս էլ պէտք է անեմ:

**ԶԱՀԱՆ.**—Այ Սիւլէյման, ապա դուինչնու աղպէս տա-  
րիքդ առնում ես ու ինքդ չես ամուսնանում:

**ՍԻՒԼԷՅԹ.**—Մյդ ես էլ եմ մտածում, ես էլ կամուսնանամ  
մօրքուր, նախ և առաջ այս մեր Ասկեարին ա-  
մուսնացնենք, երևում է շատ է շտապում: Յե-  
տոյ ես էլ կամուսնանամ: Է՛, մօրքուր, դնւ ինչ  
ես մտածում:

**ԶԱՀԱՆ.**—Ոչինչ, ցաւդ տանեմ:

**ՍԻՒԼԷՅԹ.**—Ոչ մօրքուր, բաւական է որքան դու էլ այրի  
մացիր. արի քեզ էլ մի լաւ մարդու տանք,  
որ մեր կեանքը օրհնող լինի:

**ԶԱՀԱՆ.**—Վայ ցաւդ տանեմ, իմ ինչ մարդու դնալու  
ժամանակն է:

**ՍԻՒԼԷՅԹ.**—Դեռ շատ երիտասարդ ես, ի հարկէ որ ժա-  
մանակդ է: Այնպէս է թէ ոչ.—ի հարկէ, որ  
այսպէս է: Վէլի, այ տղայ, դէ դու էլ պատ-  
րաստւիր:

**Վ է լ ի.**—(Ամաշխով զլուխը քարշ է զցում):

**ՍԻՒԼԷՅԹ.**—Հը, Ասկեար, ինչ մտատանջութեան մէջ  
լինկար:

**ԱՍԿԵԱՐ.**—Աստուած վկայ էգուցւանից ես արշին մալ  
ալան եմ դառնալու:

**ՍԻՒԼԷՅԹ.**—Եւ շատ լաւ կանես. Աստուած շուտով քեզ  
նպատակիդ հասցնէ՝ մեղ էլ: Այնպէս է թէ ոչ,  
մօրքուր:

**ԶԱՀԱՆ.**—Ցաւդ տանեմ, ի հարկէ որ այդպէս է:

**ՍԻՒԼԷՅԹ.**—Այնպէս է թէ ոչ, Վէլի:

**Վ է լ ի.**—Ճիշտ ես հրամայում, ըէկ:

**ՍԻՒԼԷՅԹ.**—Ուրեմն այժմ որ այսպէս եղաւ՝ հէք ինձ մօտ:

**ՔԵՂ ԱՍՏՈՒԱԾ ԼԻՆԻ օԳՆԱԿԱՆ,**  
իմ սիրելի ընկեր Ասկեար:

**Ապրիր երկար,** միշտ յաւիտեան,  
իմ սիրելի ընկեր Ասկեար:

**Խորհուրդիս ուշագիր եղիր,**  
իմ սիրելի ընկեր Ասկեար:

**Եւ շուտ արա ամուսնացիր,**  
իմ թանգագին ընկեր Ասկեար:

**Վէլի,— Քեզի մատաղ աղաս Ասկեար,**  
էս աղին գու շուտ խօստացիր:

**Քեզի մատաղ աղաս Ասկեար,**  
Դէ շտապիր ամուսնացիր:

**Կեանքիդ զուրբան, աղաս Ասկեար,**  
ինձ էլ մի ճանապարհ բացիր:

**ՍԻՒԼԷՅԹ. և Վէլի.—Շատ խելօք գործ կը կատարես**  
Եթէ մեզի ականջ դնես,

**Շուտ շորերըդ փոխիր, հոգ չի**  
Որ նմանուիս արշին մալչի.

**Դոնէ դուռ ընկեր վաճառիր**

**Քեղ համար հարսնացու ճարիր.**  
Եւ գու դրան կարժանանաս՝

**Եթէ արշին մալչի դառնաս:**

(Պար)

ՎԱՐԱԳՈՅՅՐ

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Տեսարանը ներկայացնում է Սուլթան.բէկի տան տռաջին պարագալը. Գիւլօհրան, Ասեան և Թէլիք նստած են. մէկը կար է առում. իսկ միւսը դուլպա գործում:

1.) Գիւլօհրա, Ասեա եւ Թէլիք.

ԳԻՒԼԶՈՒՄ. — Կարելով երգում է.՝

Ա. Կարելուած, հոգս ու ցաւից  
իմ սրտիկը խաւարեց,  
Աչքիցս լոյսը հեռացաւ  
Սուլին ու շիւան ինձ պատեց:  
Այն օրից անբաղացայ  
Երբ ծնայ, աշխարհ եկայ.  
Աստուած, կամ առ իմ հոգին  
Եամ վերջ տուր իմ ցաւերին...:

ԱՍԵԱ. — Ահ Գիւլօհրա, քանի դու երգում ես, ես միշտ տխրում եմ:

ԳԻՒԼԶՈՒ. — Երկի իմ երգը քեզ դուր չի գալիս:

ԱՍԵԱ. — Աչ, ընդհակառակը, ինձ շատ է դուր գալիս,  
այդ պատճառով էլ ես տխրութեան և մտածմունքի  
մէջ եմ ընկնում:

ԳԻՒԼԶՈՒ. — Եւ միթէ մեր ամբողջ կեանքը ծայրէ ի ծայր  
տխրութիւն ու թափիծ չէ:

ԱՍԵԱ. — Այս. Աստուած վկայ ճշմարիտ ես ասում:

Թէլիք. — Այ խանումներ, ինչ կայ որ ախ ու վախ էք  
քաշում: Եթէ տէրը կամենայ, Սուլթան բէկը  
էսօր էգուց ձեզ կամուսնացնի, կը գնաք տուն  
ու տեղի և զաւակների տէր կը գաղառնաք, ու վշտե.  
րից կաղառուէք:

ԳԻՒԼԶՈՒ. — Այ Թէլիք, այնպէս, ինչպէս որ մեզ են ամուսնացնում, բոլորովին չամուսնանալը տեկի  
լաւ է:

Թէլիք. Ինչժաւ, այ խանում, ինչնու ես այդպէս խօսում:

ԳԻՒԼԶՈՒ. — Աստուած վկայ դրուստ եմ ասում, ես երբէք  
չեմ կամենում այդ ձեռվ ամուսնանալ. չես կա-  
րող իմանալ թէ քեզ ումն են տալիս. ովկ է լի-  
նելու ամուսինդ. երիտասմբդ է, ծեր է, քաշմլ  
է, կմղ է, թակմղ է:

ԱՍԵԱ. — Ուրեմն Գիւլչօհրա, մարդու բնաւ չգնալով  
ու աանը մաալով թթու պիտի դառնասու:

Թէլիք. — Աստուած մի արացցէ:

ԳԻՒԼԶՈՒ. — Միթէ ես ասում եմ, որ աանը այնքան  
մաանք մենչե որ պառաւենք... իմ ասածս այն է  
որ, մարդս մի առաջուց տեսնելու է թէ մեմ հետ  
է ամուսնանում: Նայի, տեսնէ կերպարանքին հա-  
ւանի ու այնունետեւ ամուսնանայ:

ԱՍԵԱ. — (Ժիծալելով) Այնպէս բան ասացիր որ եփած  
հաւան էլ կը ծիծաղի: Դու այս չորս պատին մէջ  
մւմը կարող ես տեսնել, որ գեռ միենոյն ժա-  
մանակ ուզում ես նայել ու հաւանել:

ԳԻՒԼԶՈՒ. — Այդ գէպքում տանը մնալը գերադասելի է:  
Թէլիք. — Բող մի աղաս կամենայ ձեզ տմուսնացնել,  
այն ժամանակ ես կը վագիմ կը գնամ ձեր նշա-  
ներին կը տեսնեմ, տունը տեղին կը նայեմ—  
յետոյ գալով ձեզ բոլորը կը պատմեմ: (Գիւլ-  
չօհրա եւ Ասեա ծըծաղում են):

ԳԻՒԼԶՈՒ. — Լաւ է, այ Թէլիք, նշանակում է, որ եթէ  
մեր փեսացուին դու տեսնես՝ էլ մեր տեսնելուն  
կարիք չի մնում:

Թէլիք. — Ոչ խանումներ առաջ ես կը տեսնեմ, յետոյ  
էլ դուք կը տեսնէք:

ԱՍԵԱ. Լաւ է Թէլիք, թող քո ասածը լինի, թող մեզ  
մարդոր տան մնացեալը հեշտ է:

ԳԻՒԼԶՈՒՄ. — Ոչ երբէք. ես առանց տեսնելու և հաւա-  
նելու երբէք չեմ ամուսնանայ: Բայց դուք ա-  
ռանց տեսնելու պատրաստ էք ամուսնանալու:

Թէլիք. — Աստուած վկայ, խանում, առանց տեսնելու ա-

մուսնանալը լաւ է, քան տեսնելով ամուսնանանալը, որսվետև երբ չտեսած ամուսնանում ես, սիրտդ թփրտում է՝ որ ժամ առաջ տեսնեու Թեզ փառաւոր կը գուգեն ու կը հաղցնեն, ֆայէտօն կը նստացնեն ու Ալլահ, Ալլահ աղաղակելով կը տանեն, ոտներիդ տակ մատաղ էլ կը մորթեն:

Յետոյ սենեակ տանելով անկիւնում կը բաղմեցնեն: Սիրտդ թփրտում է. նայում ես, մէկ էլ յանկարծ գուոը բացւում է ու երիտասարդ փեսացուն մտնում... (Այս միջոցին դուռը բացտում է եւ Սուլթան բէկը երետում. Աղջկերը իսկոյն լոռում են եւ իրանց գործերով զբաղտում): Աստուած մի արասցէ որ այսպիսի փեսացու լինի:

### 2.) Նոյնը եւ Սուլթան բէկ

**ՍՈՒԼԹԱՆ ԲԷԿ,—Աղջի Թէլլի հաղար անգամ պատրիեր**  
եմ քեզ, որ պառկելիս գաս վրաս ծածկես, հիմի բաց եմ պառկել ու մէջքս մրսել է: է՞ս եթէ հանգուցեալ Սօնսաս կենդանի լինէր... էս մենակութիւն էլ մի բանի նման չէ:

**ԳԻՒԼՉՈՀ.—Հայրիկ, մենք չգիտէինք. եթէ մեղ ասէիք,**  
մենք կը ծածկէինք:

**ՍՈՒԼԹԱՆ Բ.—Զէմ ասում. դէ, արդէն անց է կացել.**  
(Յորանջնով) դէ, վեր կացէք ներս գնացէք.  
ես էլ քաղաք եմ գնալու. դէ, գնացէք ու տանը  
հսկեցէք: (Աղջկերը ներս են գնում:)

### 3.) Սուլթան բէկ (միայնակ)

Զի լինում. միայնակութիւնը ինձ բոլորովին ձեռնտու չէ. հինգ տարի է, որ օր օրի վրայ յետ եմ գնում. երկու օր առաջ բժիշկ Սիրզա Հիւսէինին ասում եմ՝ այս տեղս է ցաւում, այս

կողմս է ցաւում. ասում է մի կին առ. ուր էր, եթէ մի այդպիսի կին պատահէր՝ կառնէի: Ի հարկէ ինձ աղջիկ չեն տայ, որովհետև տարիքս շատ է. իսկ փողս. քիչ. հայինույով ու հրաձանաձգութեամբ հարսանիք կատարելը ինձ պատշաճ չէ: Ինձ պէտք է մի տարիքով այրի կին, որ մի մօլայով, մի գլուխ էլ շաքարով գործս վերջանայ. այնուհետև կինս կսկսի գիշերները միրուքիս հինա դնել, ու առաւօններն էլ կը լւանայ. պառկելիս էլ մէջքս չի մըսի... էն. բաղար գնամ տեսնեմ ինչ կայ չի կայ... (Գնում է:)

### 4) Ասկեար (քեմի ետեւից)

**Արշին մալ ալան**  
**Արշին մալ ալան (երեք անգամ)**  
**Բաֆթա, թաւթա, բողչա, հէյ**  
(Մտնում է թեփի տուկ նոթերին, իսկ ծեռքին արշին)  
Ահա ամբողջ երեք օր է որ գոնէ գուռ զըշում  
եմ, բայց վնտրածո չեմ գտնում: Այս օրն էլ  
անցաւ, տեսնեմ ինչ է լինելու: Ո՛վ բաղդ, գու  
ինձ հասիր...

**Արշին մալ ալան.., (3)**  
**Բաֆթա, թավթա, բողչա. հէյ..**

### 5) Դիւլչօնրա, Ասեա եւ Թէլլի

**ԳԻՒԼՉ.—**  
**ԱՍԵԱ.—**  
**Թէլլի.—** (Միասին) Արշին մալչի, արշին մալչի,  
այստեղ արի:

**ԱԾԿԵԱՐ.—** (Մօտենալով) Կարծես աղջիկների հանքն եմ  
ընկել. երեքը միասին գուրս եկան. տեսնենք  
ինչպիսի բաներ են: Սսացէք տեսնեմ, գեղեցիկ  
խանումներ, ինչ էք կամենում, չիթ, մետաքս,  
բաֆթա, ամեն բան ունեմ:

**ԳԻՒԼԶ.** — Բաց արա տեսնենք, մեզ համար ի՞նչ կայ: **ԱՍԿԵԱՐ.** — Այս բողէիս, խանում: **ԱՍԵԱ.** Գետի ը մասն թնչ սիրուն ազոյ է: **ԱՍԿԵԱՐ.** — (Ռէշանդրթեամբ Դիլզօնիսին նայելով) Տես խանում, ինչ միբագ ուզէ, բոլորը այստեղ կայ... (մեկուսի) բայց ինչ հրաշալի աղջիկ է: **ԹԷԼՆ.** — Այս, խանում, այս վարտիկաց ու ինչ լսուն է: **ԱՍԵԱ.** — Ան այդ ինչ բանի ովէտք է... **ԳԻՒԼԶ.** — Գուցի քեզ համար անպէտք է, բայց Թէլն համար պէտքական է: **ԱՍԿԵԱՐ.** — Ճիշտ ևս հրաժայում, խանում: (Մեկուսի) Խելացի աղջիկ է, հաւ Ուրնմն քանի արշին հրաժայում էք կտրել աղախնու համար: **ԳԻՒԼԶ.** — Ի՞նչ արժէ արշինը: **ԱԾԿԵԱՐ.** — Տասն երկու կոպէկ արժէ, բայց ձեզ համար տասը կոպէկից կը հաշուեմ: **ԳԻՒԼԶ.** — Մեռք այս տեսակ չիթիրի արշինը միշտ ութ կոպէկով հնք տանում: Պու էլ եթէ կտառ՝ տասն արշին հարթիր:

**ԱԾԿԵԱՐ.** — Ոչինչ, թող ձեզ մատաղ լինի. (Հափելով) մէկ, երկու, (մեկուսի) կարծես վնարածս գտել եմ. երեք, չորս... Ասուածու վկայ շատ սիրուն աղջիկ է... հինգ, վեց, եօթը, կարծես հէնց իմ բախտը այս պէտք է լինի... ութը, ինը... երեկ ինչպէս երեսն է, այսպէս էլ սիրտը պէտք է որ գեղեցիկ լինի... տասը, տասնմէկ, տասներկու... **ԳԻՒԼԶ.** — Տասն արշին բառական է: **ԱՍԿԵԱՐ.** — Ահ, մոսացել էի. այս է, տասն արշին է, (կտրում աղախնուն է տալիս): **ԱԾԵ.** — Մեզ յարմար ոչինչ չունեմ: **ԱԾԿԵԱՐ.** Խանում, ձեզ վայել բաներ էլ շատ ունեմ, միայն տանն է, միս անգամ գալիս կը բերեմ: (Գիլզօնըան փող է տալիս.) Քո ձեռքիդ բարա քեռթն էլ ինձ բառական է:

**ԳԻՒԼԶՕՐ.** — Ինչից իմացար, որ ձեռքս բարաքեաթով է: **ԱՍԵԿԵԱՐ.** — Այսպէս, սիրտս վկայում է, որ ձեռքդ բարաքեաթով է: (Մեկուսի) Ասուած վկայ, հէնց իմ ուղածն այս է: Խանում, Ոուլթան բէկի տունը միթէ այս չէ: **ԳԻՒԼԶՕՐ.** — Հէնց նա է: **ԱԾԿԵԱՐ.** — Ասուած հաստատ պահէ: Հապա Ոուլթան բէկի աղջիկը մըն է: **ԱԾԵԱ.** Հէնց սա ինքն է: **ԱԾԿԵԱՐ.** — Ասուած կիսմաք տայ: (Մեկուսի) Շատ գեղեցիկ աղջիկ է: **ԱԾԵԱ.** — Գիւլչօնը, դէ, տուն գնանք, թէ չէ հօրեղը բայրու կը գոյ կը բարկանայ (զնում են): **ԱԾԿԵԱՐ.** — Ողջ ու շէն կենաք: **ԳԻՒԼԶ.** — (Գնալով) Դու էլ ողջ եղիք:

6) Ասկեար (մենակ)

Ճշմարիտ խօսելով, ես սրանից գեղեցիկ աղջիկ չեմ տեսել և կարող է պատահել, որ այսուհետեւ էլ չտեսնիմ: Ասկեար, արի, ես բաղդ ասա ու սոսան առ: Թէկ Ոուլթան բէկը ինձ չէ տիսած, բայց անունս լսած կը լինի: Գիտէ որ հարուստ վաճառական եմ, և եթէ աղջիկն ուզեմ՝ կը տայ: Իսկ եթէ աղջիկն իմանայ, որ ես իսկապէս արշին մալ ծախող եմ, ինձ կուզէ. ի հարկէ եթէ խելացի աղջիկ է՝ կուզէ:

Կարծես գտայ սէրը սրտիս (կըկնել) **Միթարանքս** իմ ցաւերիս,

Այսուհետեւ կուզեմ ապրել,

Եթք որ գտայ ընկեր կեանքիս: (կըկնել) **Բայց** Ոուլթան բէկը եթէ իմանայ, որ ես արշին մալ ծախող եմ, հազար տարի էլ մնայ, աղջիկն ինձ չի տայ: Երանի աղջիկը մի անգամ էլ դուրս

— 20 —

գար, տէսնէի ու խօսեցնէի, կաց տեսնեմ. (ղընից  
նայում է) կարծես եկող կայ. թագնւեմ, տեսնեմ  
մվ է: (թագնւում է)

7) Նոյնք եւ Գիլզօրնը

ԳԻՒԼԶՕՀ.—Ասեան ասում էր որ արշին մալչիի տեսքը  
շատ գեղեցիկ է: Եթէ Ասեային ասեաք թէ արի  
քեզ նրան տանք—մի ահագին աղմուկ կը բար-  
ձրացնէ, ասելով՝ միթէ նա իմ զոյգն է: Բայց իմ  
կարծիքով արշին մալչի լինելը մի վատ բան չէ.  
նա էլ վաճառականի նման մի բան է: Ասուած  
վկայ, եթէ հայրս համաձայնէի, ես նրա հետ էլ  
կամուսնանամ. որքան էլ չլինի, ես նրա երեսը  
տեսած եմ, գիտեմ որ կաղ չէ, կոյր չէ, քաչար  
չէ, ծեր չէ, դէմքն էլ ինձ գուը եկաւ. եթէ նրան  
լաւ հազցնես, մի բէկի տղի նման գեղեցիկ տղայ  
կը դառնայ. ինձ ասաց թէ ձեռքդ բարաքեաթով  
է: և նա ինձ ինչպէս էր նայում... ահ, ինչեր եմ  
խօսում. գուցէ նա կին, երեխաներ ունի:

ԱՍԿԵԱՐ.—(Երեսալով) Ներիր խանում...

ԳԻՒԼԶՕՀ.—(Ցնցւելով) Ո՞հ, ինչպէս վախեցայ...

ԱՍԿԵԱՐ.—Կարծեմ ես արշինս այստեղ եմ մոռացել...

ԳԻՒԼԶ.—Եթէ մասր, այստեղ կը լինէր:

ԱՍԿԵԱՐ.—Վնաս չունի, տանը ուրիշ արշին էլ ունեմ...

ԳԻՒԼԶ.—(Մեկուսի) Կը կին ինձ է նայում. նայւացքը  
նայւացքիս հանդիպելիս կարծես կայծակնահար  
եմ լինում:

ԱՍԿԵԱՐ.—Խանում, երանի Սուլթան բէկը քեզ նման  
տասներկու աղջիկ ունենար:

ԳԻՒԼԶ.—Դրանով ի՞նչ ես ուզում ասել:

ԱՍԿԵԱՐ.—Այն եմ կամենում ասել, որ մէկ աղջիկը  
բէկի, մէկը խանի, մէկը վաճառականի, մէկը մօլ-  
լայի, մէկը սէյիդի տալով վերջի մացածն էլ  
ինձ կը տար:

ԳԻՒԼԶ.—Լաւ կը լինէր:

ԱՍԿԵԱՐ.—Բայց ոչ չի տար. ի հարկէ չի տար. նա  
մի բէկ է, իսկ ես՝ արշին մալչի. նա ինձ աղջիկ  
չի տար... և եթէ նա տալու էլ լինի՝ աղջիկը չի  
գնայ:

ԳԻՒԼԶ.—Երկի դու ամուրի ես:

ԱՍԿԵԱՐ.—Կատարելապէս ամուրի եմ, բայց Աստուծոյ  
տւածից գործս շատ յաջող է գնում, մի կտոր  
հաց ունեմ:

ԳԻՒԼԶ.—Ուրեմն ինչու մինչև հիմի չես ամուսնացել:

ԱՍԿԵԱՐ.—Ի՞նչպէս ամուսնանամ. չտեսած աղջկանս  
չեմ կարող առնել, իսկ իմ տեսածներից էլ այն-  
պիսի մէկին եմ հաւանել որ նրան էլ ինձ չեն  
տայ:

ԳԻՒԼԶ.—Աղջիկը ինքը քեզ չի ուզի:

ԱՍԿԵԱՐ.—Չեմ կարծում որ ուզի, որովհետեւ նա բէկի  
աղջիկ է:

ԳԻՒԼԶ.—Դու նախ աղջկան հարցրու, յետոյ այդպէս  
խօսիր: Ինչից գիտես որ չի ուզի:

ԱՍԿԵԱՐ.—Ճիշտ ես հրամայում, խանում, եթէ այդ-  
պէս է, ասա տեսնեմ. ինձ հետ կամուսնանմաս:

ԳԻՒԼԶ.—(Գարմացած) Ո՞վ. Բո ..

ԱՍԿԵԱՐ.—Այն. դու, իմ հաւանած աղջիկը միմիայն  
դու ես:

ԳԻՒԼԶ.—Իսկ ես կարծել էի թէ ուրիշ աղջիկ է...

ԱՍԿԵԱՐ.—Բացի քեզանից ուրիշը չէ կարող լինել:

ԳԻՒԼԶՕՀ.—Ուրեմն դու ինձ մի անգամ տեսնելով հա-  
ւանեցմը:

ԱՍԿԵԱՐ.—Ի հարկէ, խանում: Աչքը տեսաւ, սիրաը  
սիրեց, քեզ տեսած բովէիցս սիրտս իր հրձւան-  
քից սկսեց բաբախել:

Առվարելով փորձեցի  
Ամենըից ժաղացի  
Յաւ ու տանջանք շատ տարայ,  
Բայց վերջապէս քեզ պտայ:

կը կնել

Այնպէս սիրեցի, այնպէս սիրեցի,  
այնպէս սիրեցի իմ հոգի,  
Որ տանց քեզ չեմ տպրի:

Գիհլօչ. — Ոչ ոքի չէի տեսնում,  
Դպտնիքս չէի տառւմ.  
Ի՞նչ է սէր, չը գիտէի,  
Թեղ տեսնելով սիրեցի:

Այնպէս սիրեցի, այնպէս սիրեցի, և այլ:  
Միկարն. — Ա՛ն, մեր բաղդը մեզ օգնեց,  
Ես ինձ թշւաս կարծեցի,  
Բայց ինձ կեանքը ողջունեց  
Քեզ տեսնելով սիրեցի:

Այնպէս սիրեցի, այնպէս սիրեցի, և այլն:  
Գիհլօ. — (Մեկուսի) Ասուած վկայ ինձ էլ միենոյն  
բանը պատահեց. (Նրան) բայց հայրս ինձ քեզ  
չի տայ:

ԱՍԿԱՐ. — Քիտեմ որ չի տայ, դու ինքդ էլ չես կա-  
մենայ:

Գիհլօ. — Ո՞րտեղից գիտես որ չեմ կամենայ:

ԱՍԿԱՐ. — Դու ով — ես ով...

Գիհլօ. (Ամաշելլի) Դու էլ մարդ ես, ես էլ. ես էլ  
քեզ եմ հաւանել:

ԱՍԿԱՐ. — (Երգում է իրաքանչիւր երկու տողից յե-  
տոյ կրկնել)

Եթէ այդպէս է, խանուժ  
Ուրիշն ինչ եմ անում.  
Քեզ եմ միտայն ես սիրել,  
Ես սիրով յափշտակւել:

Դիհլօ. — Միթէ դու ինձ ես սիրուժ  
Ուրիշն էի ես կարծում,  
Եթէ այդպէս է միանանք  
Եւ շուտով ամուսնանանք:

ԱԾԿԱՐ. — (Մեկուսի) Այս շատ զ-րմանալի բան ե-  
ղաւ. (Նրան) խանում, ես քեզ յարմար զոյդ չեմ:  
Գիհլօ. — Զգիտեմ, բայց քեզ շատ եմ հաւանել:

ԱԾԿԱՐ. — Խանում, երի ճիշտ է ասած, որ սիրով  
սրտին է քաշում:

Գիհլօ. — Ինձ խանում մի ասի. անունս Գիւլչօհրա է:  
ԱԾԿԱՐ. — Գիւլչօհրա, ուրիշն ինչպէս անենք որ հայրդ  
քեզ ինձ տայ:

Գիհլօ. — Ինձ հօրիցո խնդրիք, տեսց լաւ, եթէ չտեսց  
այն ժամանակ ես իմ կամքովս քեզ հետ կամուս-  
նանամ:

ԱԾԿԱՐ. — (Մեկուսի) Շատ զարմանալի է (Նրան)  
բայց հայրդ քեզ բռնի կամուսնացնի:

Գիհլօ. — Բանութեամբ ես չեմ ամուսնանայ:

ԱԾԿԱՐ. — Քիզ բռնի կը տանեն:

Գիհլօ. — Ինքս ինձ կը խեղգեմ:

ԱԾԿԱՐ. — Ասուած մի արացէ: Հիմի որ գործը այս-  
տեղ հասաւ, թող մի լու խորհինք գուցէ մի  
զարման անենք: Հիմի դու տուն գնայ, թէ չէ  
մեզ միասին կը տեսնեն. Առա բարեաւ:

Գիհլօ. — Դնաս բարեաւ. բայց լու իմացիք, որ խօսքս  
խօսք է: (Դնում է)

### 8) Ասկեար (առանձին)

Աղջկը ինձ հաւանել է, բայց ափսոս որ չդիտէ թէ  
ես մի հարուստ վաճառական եմ: Ինչոս էլ զիտ-  
մամբ այդ բանը աղջան չայտնեցի, որպէսզի  
աղջկան փորձեմ: Հիմի դուամ մի պատճառով  
մօրքուրիս էլ այստեղ զրկեմ, թող տեսնէ թէ ես  
ինչպիսի աղջիկ եմ ընտրել: (Դնում է):

7.) Գիւլօհրա, յետոյ Ասեա եւ Թէլլի

**ԳԻՒԼՉՈՀՐԱ.**—(Մտնում է դէս ու դէն նայում եւ յետոյ մտածկոտ նստում):

Այս ինչ արեցի, մի օտար տղի այնպիսի բաներ ասացի, որ աղջկայ համար անվայել է... չգիտեմ որտեղից լոյս ընկաւ, ինքը լաւ, խօսքերը քաղցր... երբէք մտքից չէ հեռանում... ահ, թշւառ սիրացաւ է տանջում:

Որտեղից էր ինձ պատահեց  
Սրշին մալ ալան,

Սիրտու կրակով նա դաղեց  
Տանջւում եմ:

Ինքը լաւ, քաղցըր խօսքերը  
Արշին մալ ալան,

Սիրեցի աչք ու յօնքերը  
Տանջւում եմ:

**ԱԾԵԱ.**— } (միասին) Այս ինչ յուսահատութիւն,  
**ԹԷԼԼԻ.**— } Գիւլչօհրա, Գիւլչօհրա,

Քեզ պատել է տիրութիւն,

Շուտ ասա, շուտ ասա,

Այդ ինչ կերպարանք է սա,

Գիւլչօհրա, շուտ ասա, } 2

Գիւլչօհրա, շուտ ասա, } 2

Աղջկան անպատշաճ է,

Ու տըխրի, մտածէ,

Ցաւիդ պատճառը ասա,

Գիւլչօհրա, շուտ ասա, } 2

Գիւլչօհրա. շուտ ասա: }

(Վերջին տունը նորից կրկնել. Աղջկերը հեռանում են).

10.) Ասկար, Զահան

**ԱԾԿԵԱՐ.**—Տես, մօրքուր, աղջկը հէնց այս տանն է ընակւում, այս կտորը կը տանես, և կասես որ

արշին մալչին զրկեց. Եթէ ով լինելող հարցնող լինի, կասես թէ առշին մալչու մօրքուրն եմ, հասկացար:

**ԶԱՀԱՆ.**—Հասկացայ, մօրքուրը քեզ մատաղ, գնում եմ: (Ներս է մտնում):

**ԱԾԿԵԱՐ.**—Հետզիետէ աղջկան աւելի ու աւելի եմ սիրահարուում: Հէնց այսօր Սիւլէյմանին պէտք է տեսնեմ և ուղարկեմ որ գնայ ու միջնորդութիւն անէ: Այսպէս ուրեմն, ուզածս գտայ: Այս տունը, այս բակը, այս ճանապարհը, այս բոլոր կարծես երեսիս ժպտում են:

Վերջապէս գտայ իմ փնտրածը,

Գիշեր ու ցերեկ իմ երազածը,

Եթէ նրան ինձի պարզեց բաղդը,

Կրնեմ աշխարհի երջանիկ մարդը:

Եկ, Եկ, գողտրիկ աղջիկ,

Եկ, Եկ, իմ անուշիկ.

Ել չունեմ ես ախ-վախ

Կեանքս քեզ մատաղ:

Լաւերից լաւըն է, իմ սրտիս ընտրած,

Կարծես հրեշտակ է—ոչ արարած.

Ազնիւ է սրտով ու հասուն, խելացի.

Միակն աշխարհում. այս որ ընտրեցի:

Եկ, Եկ, գողտրիկ աղջիկ, և այն:

Այժմ այլես աւելորդ է այստեղ մնալը: Տուն գնամ, մօրքուր գալուն սպասեմ, տեսնեմ ինչ լուր է բերելու: (Դնում է):

11.) Սուկթան-ըէկ (Առանձին)

Հէնց ամենքն էլ իմ ասածն են կրկնում, թէ ինձ պէտք է հասակաւոր մի կին՝ որ մի մոլոյով ու մի գլուխ շաքարով գործը գլուխ գայ: Հիմի ինչպէս անեմ: Ո՞րտեղից մի այդպիսի կին

զբանեմ: Արի, այ կին, եկ, եկ, որտեղ ես: (Հնց  
այս միջոցին Զահան դուրս է զալիս եւ ոզու  
է զնալ:)

12) Նոյն եւ Զահան

**ՍՈՒԼԹ.-ԲԵԿ.**—(Չափազնց զարժացած). Այս ինչ է  
արգեօք աչքիս է երեսում... ոչ սա կին է և ին-  
քըն էլ նոր մեր տնից գուրս եկաւ: Կարծես  
Աստւած իմը ինձ հասցրեց: (Նրա կողմը զնալով):  
Քոյրիկ. մի ես և ինչ գործ ունես մեր տանը:

**ԶԱՀԱՆ.**—Ծրշին մալ էի տարել աղջկերանց ցոյց տալու:  
**ՍՈՒԼԹ.-Բ.**—(Մեկուսի). Կին լինելու կին է. միայն  
վատ չեր լինի, եթէ երեսը կարողանայի տեսնել:  
Շատ լաւ, քոյրիկ, բայց գուցէ գու չադրում փա-  
թաթւած մի տղամարդ ես:

**ԶԱՀԱՆ.**—Այ եղբայր, զու այդ ինչ խօսք ես ասում:  
**ՍՈՒԼԹ.-Բ.**—Եթէ այդպէս է, մի քիչ երեսդ ինձ ցոյց  
տուր, որ մօտիկութիւն առաջ գայ մեր մէջ:

**ԶԱՀԱՆ.**—(Երեսը բոլորովին բանալով) Տեսաք որ ես  
կին եմ:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Այն, տեսայ, (մեկուսի) կին է, և ինքն էլ  
շատ լաւ տեսակից. բայց մի ինձ հասկացրու  
տեսնեմ, զու ովլ ես, ինչացն ես, ում կինն ես:

**ԶԱՀԱՆ.**—Ես արշին մալչու մօրտաքըն եմ, և ինքս էլ  
կանանց ու աղջկներին ապրանք եմ ծախում:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Լաւ, բայց չասեցիր թէ ում կինն ես:

**ԶԱՀԱՆ.**—Ես զալալ քէրբարյ Նասիրի կինն եմ, գուցէ  
կը ճանաչեմ:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Ոչ, չեմ ճանաչում. ես զալալի հետ գործ  
չունեմ: Լաւ, ուրեմն մարդդ զալալութիւն է ա-

նում, իսկ ինքդ էլ արշին մալ ես ծախում:

**ԶԱՀԱՆ.**—Այն, մարդս զալալութիւն անում էր:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Անում էր. հիմի ինչ գործ է անում:

**ԶԱՀԱՆ.**—Հիմա Աստւած գիտէ թէ ինչ գործ է անում.  
ասաներկու տարի է որ հանգուցեալը մեռել է:  
**ՍՈՒԼԹ.-Բ.**—Մհանլ է, նշանակում է զու այրի ես:  
**ԶԱՀԱՆ.**—Այն, այրի եմ:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Այդպէս ասա էլի: Զէ որ ես էլ եմ այրի.  
(Հազում է եւ իրեն ուղղում): Ուրեմն ասում ես  
որ 12 տարի է մարդդ մհանլ է և դու այրի ես  
մնացել. Լաւ, հիմա ինչպէս անենք:

**ԶԱՀԱՆ.**—Ի՞նչը ինչպէս անենք:  
**ՍՈՒԼԹ.-Բ.**—Օս ան եմ ասում, որ իմ կինս էլ ծ տա-  
րի է վախճանւած է: Շատ վատ է այսպէս  
մնալը, մարդ առանձնութեան մէջ ինչ անելը  
չի իմանում: (Մեկուսի), լաւ ձեռքս է ընկել,  
պէտք չէ սրան բաց թողնել: (Զահան ուզում է  
զնալ): Մի կաց է, մւր ես այդպէս շտապում:

**ԶԱՀԱՆ.**—Շտապում եմ, գործ ունեմ:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Ծրանից լաւ էլ ինչ գործ: Դու այրի. ես  
այրի. մեր ցաւերը միմեանց պատմէնք: Լաւ,  
ուրեմն հիմի զու ասում ես որ այրի մու

**ԶԱՀԱՆ.**—Այն, ասացի որ ամուսինս տասներկու տարի  
է մհանլ է:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Բանը նրանումն է որ ես էլ եմ այրի:

**ԶԱՀԱՆ.**—Ինչ արած, Աստւածոյ կամքն է. մենակ զու  
չես:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Այդ գիտեմ որ այդպէս է. բայց արի մենք  
երկուս էլ մի բան անենք:

**ԶԱՀԱՆ.**—Այդ ինչպէս անենք:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Էլ ինչպէս պիտի լինի. մի հատ մոլլա,  
մի գլուխ շաքար, գրծը կը վերջանայ:

**ԶԱՀԱՆ.**—Չեմ հասկանում թէ ինչ ես ասում:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Չեմ հասկանում. զարմանալի դիլ բիլ  
մազ ես եղել. բա որ այդպէս է, ուրեմն լիբր  
թէ ինչ եմ ասում, այ դիլ բիլմազ:

Մի ձի հեծայ, աշխարհ ընկայ, եկ առնեմ,  
դիւ բիւմազ:  
Վերջ ի վերջոյ քեզի գոտայ. մարալըս, դիւ  
բիւմազ:  
Դու ես ինձ յարմար,  
Յօնքերդ կամար,  
Եկ առնեմ, դիւ բիւմազ:  
Տուն կառուցի քարի վրայ, եկ առնեմ դիւ  
բիւմազ.  
Ինչ որ ասես՝ գլխիս վրայ. մարալըս, դիւ  
բիւմազ:  
Դու ես ինձ յարմար,  
Յօնքերդ կամար,  
Եկ առնեմ, դիւ բիւմազ:  
Դու այրի, ես այրի, դու եկ ինձ սիրի, դիւ  
բիւմազ,  
Ես ինչ ասեմ, դու լիի, մարալըս, դիւ  
բիւմազ:  
Դու ես ինձ յարմարը, և այն. (կրկնել)

9) Նոյնք եւ Ասկեար

ԱՍԿԵԱՐ.—Այս ինչ զարմանալի բան է. (առաջ զարմվ) բէկ, այ բէկ. սպասիր խօսք ասեմ. այդ  
լաւ բան չես անում, որ ուրիշի կնոջ սիրահա-  
րական երգեր ես երգում:  
ՍՈՒԼԹ.-Բ.—Քեզ ինչ, դժու, ով ես:  
ԱՍԿԵԱՐ.—Ինչպէս թէ ինձ ինչ. չ՞ որ սա իմ մօրա-  
քոյրն է:  
ՍՈՒԼԹ.-Բ.—Մօրաքնյրդ է. նշանակում է արշին մալ-  
չին դու ես:  
ԱՍԿԵԱՐ.—Այս, ես եմ:  
ՍՈՒԼԹ.-Բ.—Շատ լաւ, շատ բարի. Բայց դու շատ ան-  
գութ մարդ ես:

ԱՍԿԵԱՐ.—Ի՞նչ է եղել  
ՍՈՒԼԹ.-Բ.—Ինչ պէտք է լինի. այն, որ դու այս  
խեղճ կնոջ 12 տարի պահել, մարդու չես տւել:  
ԱՍԿԵԱՐ.—(Ժպտալով) Ի՞նչ անեմ. մի լաւ մարդ չեմ  
գտնում:  
ՍՈՒԼԹ.-Բ.—Լաւ մարդ ես ուզում.—Կու Արի էլի, արի  
ազգական դառնանք. ես էլ այրի եմ:  
ԱՍԿԵԱՐ.—Բէկ, ճիշտ ես ասում թէ՝ հանաք ես անում:  
ՍՈՒԼԹ.-Բ.—Ճիշտ, բոլորովին սրաանց եմ ասում:  
ԱՍԿԵԱՐ.—Լաւ բէկ. գիցուք ես իմ մօրքը քեզ  
տւի. իսկ դժու ինձ ինչ ես տալիս:  
ՍՈՒԼԹ.-Բ.—Ի՞նչ պէտք է տամ. քո օգուտը այն կը  
լինի, որ ինձ նման բէկի հետ ազգական ես գառ-  
նում. մօրքը զդու օգուտը այն կը լինի՝ որ հան-  
գիստ կապըի: Սրանից աւել էլ ինչ ես ուզում:  
ԱՍԿԵԱՐ.—Ոչ, բէկ այդ բոլորը բաւական չէ:  
ՍՈՒԼԹ.-Բ.—Ուրեմն ինչ է քու ուզածը:  
ԱՍԿԵԱՐ.—Բէկ, դու ինձ հետ ուզում ես ազգական  
լինել, արի երկու կողմից ազգական դառնանք:  
ՍՈՒԼԹ.-Բ.—Ինչպէս թէ երկու կողմից...  
ԱՍԿԵԱՐ.—Ահա այսպէս, ես իմ մօրքոյրս քեզ կըտամ,  
դու էլ աղջիկդ ինձ տուր:  
ՍՈՒԼԹ.-Բ.—(Բարկացած) Յիմարի տղայ, յիմար. ինչ  
ես տուտուց տուտուց դուրս տալիս. ես, բէկի  
տղայ, իմ աղջիկս արշին մալչու պէտք է տամ.  
գնա կորիր այստեղից, դու էլ քո մօրքուրն էլ.  
տիմարագլուի. քեզ մի այնպիսի ապտակ կը  
տամ, որ ատամներդ բերանդ կըթափւի:  
ԱԶԿԵԱՐ.—Արի գնանք. մօրաքնյրդ: (Գնալով մէկուսի)  
Արշին մալչի Ասկեարին աղջիկ չտեսց, բայց  
վաճառական Ասկեարին աղջիկը կը տայ:  
ՍՈՒԼԹ.-Բ.—(Ժան դուներին մօտիկ դէպի զնացողները)  
Տես ինչ տիմար լակու է, որ իր այրի մօրա-  
քը փոխարէն իս աղջիկս է ուզում, յիմար:

(Մտածկոտ) Ոչ, ոչ ես բաղդ չունեմ: Կինը  
երկնքից ընկածի նման ձեռքումս էր. ինքն էլ  
ճիշտ իմ ուզածը, գործը զլուխ բերելու համար  
մնում էր մի հատիկ մոլլա և մի զլուխ շաքար:  
բայց ոյդ ոլտոփ պատռհասը մրտեղից որտեղ  
լոյս ընկաւ ու գործս փչացրեց: Ախ, ախ...

Ինչ վատ եղաւ իմ վիճակս, եկ առնեմ,  
դիւ բիլմազ.  
Զեռքից գնաց սիրահարըս, եկ առնեմ,  
դիւ բիլմազ:  
Դու ես ինձ յաշմար, և այլն:

### ՎԱՐԱԴՈՅՐ

### ԳՈՐԾՈՂՈՒԽԹԻՒՆ, ԵՐՐՈՐԴ

Տեսարանը ներկայացնում է Սուլթան—ընկեր տանը  
կահաւորւած մի սենեկակ:

#### 1) Գիւլչօհրա (առանձին)

Ես մի լացող սոխակ գարձայ  
Զրկւած քո վարդ երեսից,  
Ես մի համըս թութակ գարձայ  
Զրկւած քո քաղցը խօսքերից:

Մտածում էի համբերել  
Բաժանւած քո տեսութիւնից,  
Ռըրտիս ստիպեցի լուկ  
Լուս տառապել քո էարօտից:

#### 2) Նոյն եւ Ասեա

ԱՍԵԱ.—Ի՞նչ է պատահել քեզ, Գիւլչօհրա ի սէր Աս-  
տուծոյ ասա, այս քանի օր է ինչ յուսահատ ես  
երեսում:

ԳԻՒԼՉՕՀՐԱ.—Աստուծ վկայ ինքս էլ չզիտեմ: Գուցէ հի-  
ւանդ եմ:

ԱՍԵԱ.—Բայց չէ որ հիւանդի մի որ և է տեղը կը  
ցաւի, փառք Աստուծոյ, եղեռմ է որ քո ոչ մի  
տեղդ էլ չի ցաւում:

ԳԻՒԼՉՕՀՐԱ.—Ի զուր ես հարձուռփորձ անում, ի սէր Աս-  
տուծոյ հանգիստ թող ինձ:

ԱՍԵԱ.—Ոչ Գիւլչօհրա, այս քանի օր է, որ դու բոլո-  
րզին վոխւած ես, հիւանդ չես ուրեմն այստեղ

մի պատճառ կայ. . աղջի. գուցէ մէկի վրայ սիրահարւած ես:

**ԳԻՒԼՉ.**—Ուսմ վրայ պէտք է սիրահարւեմ:

**ԱՍԵԱ.**—Ոչ, ոչ, կարմրեցար. անշուշտ մի երիտասարդի վրայ սիրահարւել ես, Արդեօք ովկ է այդ երիտասարդը: Մեզ մօտ բացի արշին մալչուց ուրիշ մարդ չէ եկել. երկի այդ լակոտի վրայ ես սիրահարւել:

**ԳԻՒԼՉ.**—Ինչմէ լակոտ լինի:

**ԱՍԵԱ.**—Ա, իմացայ. արշին մալչուն աչք ունես: Աղջի. միթէ նա քեզ յարմար զոյդ է: Դուքէկի զաւակ, բէկի աղջիկ, յանկարծ մի լակոտի վրայ սիրահարւում ես.—Աստւած վկայ եթէ ճրագի պէս էլ լոյս տալիս լինի, դարձեալ ոչ մի կարևորութիւն չեմ տայ նրան: Նա ով—ես ով:

**ԳԻՒԼՉ.**—Աստւած վկայ, ինքս էլ չգիտեմ թէ ինձ ինչ է պատահել: (Հալով երեսը ծածկում է ծեռքերով):

**ԱՍԵԱ.**—(Խրատական) Դու հասած աղջիկ ես. այդ մտքերը գիխեցդ հանիր. զու ովկ այդ փողոցի լակոտն ովկ: Գոնէ մի քեզ յարմար մարդու վրայ էլ սիրահարւէիր: Տես. ես էլ քեզ նման մի աղջիկ նմ, սիրահարւում եմ որևէ մէկի վրայ: Մէկ էլ բան է, յանկարծ հայրդ իմանայ, հաստատ իմացիր, որ քեզ կտոր կտոր կանչ:

**ԳԻՒԼՉ.**—Թող հայրս իմանայ, ինձ միանգամից սպանէ, որ հոգիս ազատւի:

**ԱՍԵԱ.**—Ցիմարութիւններ, յիմարութիւն: Վեր կաց գնանք միւս սենեակը, տես քեզ ինչեր եմ ասեւու: (Միասին զնում են):

### 3) Սովորան բէկ (առանձին)

Անզգամ արշին մալչու մօրքոյրը լու էր ձեռքս ընկել, բայց չեղաւ: Հէնց ճիշտ իմ ու-

զած կինը նա էր, տարիքով, այրի. ով մի հատ մոլլով և մի զլուխ շաքարով ամեն բան կը պըրծնէր: Բայց արի տես, որ բաղդ չունեմ: Անզգամ լակհա, իր այրի մօրաքրոջ փոխարէն, իմ գեղեցիկ աղջիկս էր ուզում, կարծես աղջկանից ձեռք եմ քաշել: որ բազարի լակոտին տայի: Ես մի այնպիսի բէկ եմ, որ բոլոր ծանօթներս անունս գիտեն: Եւ յանկարծ լակոտի մէկը ուզում է ինձ փեսայ դառնալ: Բայց մօրքը ըլլը կառնէի, և եթէ մի նկատողութիւն անող լինէր կասէի թէ մի խեղճ որբեայրի կին էր, մեղքացայ առայ. մանաւանդ որ մատաղը իրա ոտքով էր եկել: Ստանի ճռւտ, գործը խանգարեց և չթողեց որ վերջացնէինք... է՛ճ. գնամ քիչ հանգստանամ. մէջըիս ցաւը նորից բռնեց. (մտնում է աջ: Իսկ ծախից դուրս է զալիս):

### 4) Թէլլի. յետոյ Ասեա

**ԹԷԼԼԻ.**—Ե՛ֆ, աղաս էլի գնաց ձգելու: Էղ մարդը ուղղակի զահէս տարել է, հիմի էլի պիտի կանչէ՝ աղջի թէլլի, արի մէջքս տրորի...:

**ՍՈՒԿԹ.-Բ.**—(Դրսից) Աղջի թէլլի, արի մէջքս տրորի:

**ԹԷԼԼԻ.**—Զէթ ասում. հիմի էլի պիտի սկսի... (Ներս է մտնում)

**ԱՍԵԱ.**—Այսքան խրատեցի չեղաւ. երեսում է որ աղջկը այդ լակոտի վրայ շատ է սիրահարւել: Այնուհետ է լալիս, կարկուտի նման այնքան արցունք է թափում, որ մարդ խղճահարւում է: Զգիտեմ, որտեղից որտեղ այստեղ դուրս պըծաւ այդ արշին մալ ալանը, եթէ մի բէկի աղայ կամ մի վաճառական էր եղել, էլի խօսք չունէի տսելու: Բանը այն է՝ որ մի փողոցային լակոտ է: (Հոր-

սամուտից նայելով): Այդ մեր կողմը եկողը մվէ... Ահ, ինչ գեղեցիկ երիտասարդ է. կարծես բէկի տղայ լինի: Եթէ մարդ սիրահարւելու էլ լինի, գոնէ այսպիսին սիրահարւի: Արդեօք մեզ մօտ ինչո՞ւ է գալիս: Այս ուղղակի մեզ մօտ է գալիս: Թող գայ, չպիտի հեռանամ. եկաւ: Դուրը թակում են. Ասեան բաց է անում եւ Սիլէյման մտնելիս ծեռքով աշխատում է երեսը ծածկել:

### 5) Նոյն եւ Սիլէյման

**Սիհէթ.**—Սուլթան բէկը տմնն է:

**ԱՍԵԱ.**—Այս տանն է. քիչ սպասեցէք այստեղ, իսկոյն գնամ կանչեմ: (Դնում է)

Անշուշտ Սուլթան բէկի աղջիկն է  
Գեղեցկութեամբ նոր բացւուծ վարդ է:  
Բաղդ է, Ասկեար, որ պատահեցիք  
Այս սիրունին հարսնացու ընտրեցիք:  
Ցաւում եմ որ ես չգիտէի,  
Թէ չէ նրան ինքս կառնէի:

Իսկ ինչ կը լինի, եթէ փոխանակ Ասկեարի  
համար ուղելու, հնչ ես ինձ համար ուղեմ...  
բայց ոչ. ընկերոջ նկատմամբ մի այդպիսի վար-  
մունք իմ կողմից նամարդութիւն կը լինի: Աս-  
կեարը ինձ այնքան վստահացել է, որ իբր պատ-  
գամաւոր այստեղ է ուղարկել, միևնոյն ժա-  
մանակ ինքը աղջկան սիրահարւած է. նահաթ-  
շէյթանին. մարդ պէտք է որ բարեկամութեան  
մէջ շիտակ լինի. ոչինչ. ես կը փնտրեմ ինձ  
համար, մի ուրիշ գեղեցիկ աղջիկ կը գտնեմ:

### 6) Նոյն եւ Սուլթան-բէկ

**ՍՈՒԼԹ.~Բ.**—Բահ. Սիւլէյման, որտեղից որտեղ, իէր ըլին. նստիր տեսնենք, ինչ կայ չկայ:

**ՍԻՀԷԹ.**—Եէր չեղած ինչ պէտք է եղած լինի. փառք Աստուծոյ, ամեն ինչ կարգին է:

**ՍՈՒԼԹ.~Բ.**—Շատ գեղեցիկ. է, ասա տեսնենք, ուրիշ ինչ կայ-չկայ:

**ՍԻՀԻԷԹ.**—Գիտես ինչ կայ, բէկ. այս աշխարհի գոր-  
ծերը այնպէս են դասաւորւած, որ մարդու մար-  
դու միշտ կարիք է զգում: Տեսնում ես մի բոլո-  
րովին անծանօթ մարդու հետ բարեկամանում  
ես. և յետոյ էլ այդ մարդու հետ ազգական ես  
դասում, միայն մի բան կայ, որ ազգականա-  
ցած մարդը քեզ պատշաճ լինի, հարուստ լինի,  
անունավ լինի: Օրինակի համար վերցնենք հէնց  
մեր երիտասարդ վաճառական Ասկեարը...

**ՍՈՒԼԹ.~Բ.**—Այդ մվէ է:

**ՍԻՀԻԷԹ.**—Ճիշտ է, դու նրան ծանօթ չես, բայց նրա  
հօրը լաւ ես ճանաչում հանգուցեալին վաճառա-  
կան Մուրսալի էին ասում, որ լաւ մարդկերան-  
ցից մէկն էր:

**ՍՈՒԼԹ.~Բ.**—Այս լաւ էի ճանաչում. իսկապէս, հան-  
գուցեալը շատ լաւ մարդ էր:

**ՍԻՀԻԷԹ.**—Այս. այդ իմ Ասկեար ասածա էլ նրա որդին  
է, որ իր հօր բոլոր բարեմասնութիւնները ունի,  
նրա նման լաւ և խելացի մի տղայ է. միւնոյն  
ժամանակ առուտուրն ու կարողութիւնը շատ  
կարգին:

**ՍՈՒԼԹ.~Բ.**—Լաւ, Ասկեարը ինչ է ասում:

**ՍԻՀԻԷԹ.**—Ասկեարի ասածը այն է, որ ուղում է քեզ  
ազգական դասնալք:

**ՍՈՒԼԹ.~Բ.**—Բայց իմ աղջիկս գեռ երեխայ է...

**ՍԻՒԼԵՑՄ.**—Զեմ կարծում, թէկ, որ երեխայ լինի. միևնոյն ժամանակ լաւ իմացիր, որ Ասկեարը ուշիշ մարդ է, և ես կարծեմ որ քեզ համար մի այդպիսի տղի աղջականութիւնը շատ օգտաւէտ կը լինի:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Դու այդ մի բանը ճիշտ ես ասում, և իսկապէս վաճառական դասը ինձ շատ է դուք գալիս. ինձիներ—մինձիներ, դօխտուր—մօխտուր, փաստաբան—մաստաբան, ուչտել—մուչտելների հետ ես գործ չեմ կարող ունենալ և չեմ էլ սիրում: Միայն մի բան կայ, որ Ասկեարին ես չեմ ահօնել. թէկ գիտեմ, որ հայրը լաւ մարդ էր և մեծ կարողութեան տէր, բայց յաճախ դատահում է, որ լաւ մարդիկ վատ որդիք են ունենում:

**ՍԻՒԼԵՑՄ.**—Ո՞չ թէկ, Ասկեարը շատ խելացի և լաւ աղայ է և ես ինդրում եմ, որ ինձ վստահանաս ու խօսքելիս հաւատաս: Եւ եթէ իսկապէս Ասկեարը վատ մարդ լինէր, միթէ քո աղջիկը կը ինդրէի նրա համար:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Եթէ այդպիս է՝ համաձայն եմ. Աստած շնորհաւոր տնէ:

**ՍԻՒԼԵՑՄ.**—(Ձեռքը ըռնելով). Աստած երկուսին էլ բազգաւորացնէ. որդիկերտնց տէր դասնան:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—(Վեր կենալով). Հիմի համեցէք, համեցէք միւս սենետկը թէյ խմենք և թէ խօսակցութիւնը շարունակենք: (Գնում են):

### 2) Ասեա (առանձին).

Աստած վկայ կետնքումն այսպիսի գեղեցիկ աղայ չէի տեսել. ես դռան մեղքից միանառ էլ նայեմ... ես էլ այս աղին ևս սիրահարւելու. Գիւլչօրիսն լակոտի մէկի վրայ սիրահարւելուց յետոյ, ես ինչժամ թէկի տղի նման

մի երիտասարդի չսիրահարւեմ: Եւ իսկապէս, երբ մարդս մէկին սիրում է, այն ժամանակ որքան յուսահատ վիճակ է ստեղծվում...

Թեղ տեսնելուս պէս  
Ա՛խ, իմ սիրու թըրթուաց,  
Այժմ ձգտում եմ դէպ, քեզ,  
Գամ գիւրկդ ինձ ընդունես:  
Ես որբ եմ, անիրազդ,  
Ավ սիրուն երիտասարդ,  
Այժմ ձգտում եմ դէպ, քեզ  
Գամ գիւրկդ ինձ ընդունես:  
Գնամ Գիւլչօրայի մօտ մեր դարդերը միմեանց  
պատմելու: Մենք հիմա վշտակից ենք (զնում է):  
Թէլլի. — Լաւ որ հիւր եկաւ, և ինձ աղայիս ձեռքից  
աղատեց, թէ չէ. այստեղս ճմլիր, այստեղս աը-  
բորիր, այս կողմս շփիր, այն կողմս շփիր, ծփ,  
ըուլորովին յօդնեցի, էլի: Եթէ մի լաւ մարդ լի-  
նէր ու ինձ առնէր՝ ուղղակի հոգիս կազառւէր.  
Բայց մըտեղ է...

Գիւրեր ցերեկ աչքս ճամբին  
Իմ սիրելի, ով իմ անդին,  
Քեզ է մոռմ, — իմ ցանկալին,  
Քեզ երազում թշւառ Թէլլին:  
Եթէ յայտնւիր յանկարծ,  
Կարժանանամ, ախ, Տէր-Աստած,  
Քեզ է մոռմ — իմ ցանկալին,  
Քեզ երազում թշւառ Թէլլին:  
Եւ կուգայիր գու քաջի պէս  
Որ արցանքու աչքս որբես.  
Քեզ է մոռմ — իմ ցանկալին,  
Քեզ երազում թշւառ Թէլլին:  
(Դուրը ծեծում են). Այս ով է. մի գուցէ իմ  
երազածն է. (բաց է անօսմ):

8) Նոյն եւ Վէլի.

Վէլի.—Մուլթան բէկի տունը մյս է:  
Թէլլի.—Այս, այս է, ի՞նչ գործ ունես:  
Վէլի.—Զեղ մօտ մի հիւր կմյ:  
Թէլլի.—Այս, կայ. ի՞նչ է:  
Վէլի.—Լաւ. բայց ի՞նչի՞ ես չարանում:  
Թէլլի.—Ինչի՞ պիտի չարանամ. բայց դո մի ես:  
Վէլի.—Ես քիլիմչի եմ. (մեկուածի). բայց հիանալի  
աղջիկ է. հրեի աղախին է:  
Թէլլի.—Քիլիմչին ի՞նչ բան է:  
Վէլի.—Նախ ի՞նձ էն ասա թէ դժւ ով ես:  
Թէլլի.—Ես այս տանը աղախինն եմ:  
Վէլի.—Ես էլ այն տանը ծառան եմ:  
Թէլլի.—Ո՞ր տանը:  
Վէլի.—Հէնց էն տանը, էն:

Դու աղախին ես, ես ծառայ թեղի (2)  
Աւրեմըն ի՞նչմէ ամուրի մնաս, (3)  
Դէ, ասա, դու կին ի՞նձի կը դառնաս,  
Հը, կը դառնաս:

(Պար)

Եկ, իմ սիրելի, եկ դու իմ հոգեակ (2)  
Դէ, եկ իմ ջէյրան, եկ իմ աղաւնեակ »  
Ես քեզ առնեմ, ես քեզ տանեմ, »  
Կեանքս կեանքիդ մատազ տնեմ:

(Պար)

Թէլլի.—Վայ, կարծես այս տղան դժւել է:  
Վէլի.—Ինչի՞ պիտի գիտ լինեմ, մաքալը:  
Թէլլի. ես մաքալ չեմ:  
Վէլի.—Դու ի՞նձ համեր մաքալ ես, մաքալ:

Թէլլի.—(Հաճոյքով). Դէք, շուտ, խօսիր, ասա տեսա-  
նեմ, ի՞նչ ես ուզում:  
Վէլի.—Քեզ եմ ուզում, քեզ, հասկացմը:  
Թէլլի.—Վայ, այս ի՞նչ կրակն ընկայ:  
Վէլի.—Աչքիս լոյսը, գնա էն հիւրին ասա, մի դուրս  
գայ, խօսք ունիմ ասելու: (Թէլլին դրւս է գլ-  
նում) Գնա մարալս, գնա, գնա. Ջէյրանս, գնան:  
Հիանալի աղջիկ է. թող աղաս այն աղջկանը  
առնէ. ես էլ սրան առնեմ, երկուսիս հարսանիքն  
էլ մի օրում լինի: (Չեռքերը միմւեանց է քսում):

9) Սովորան-բէկ եւ Սիւէյման

ՍիւէլէթՄ.—ԱՌ, դժւ ես, Վէլի, իմացայ թէ ի՞նչի ես ե-  
կել. դէ, գնանք: Բէկ, առայժմ ցածեսութիւն:  
ՍՈՒԼԹ.-Բ.-Ծատսութիւն, գնաս բարեալս: Աղջի Թէլլի  
Գիւլչօնրային ու Ասեային ասա թող այստեղ  
գան. աղջկանս էլ ասեմ, տեսնեմ ի՞նչ է ասում...  
այսպէս է աշխարհի գործերը... մի ժամանակ  
մենք էլ ջահել էինք...

10) Նոյն, Գիւշօնը եւ Ասեա

ՍՈՒԼԹ.-Բ.-Համեցէք տեսնեմ: Գիւլչօնրա, ի՞նչու այդ-  
պէս հիւանդոտ տեսք ունես. ի՞նչ է պատահել,  
հիւանդ լիծ չես:  
ԳԻՒԼՉՕՆՐԱ.-Ո՞չ հայրեկ լաւ եմ:  
ՍՈՒԼԹ.-Բ.-Ծատ լաւ: Աղջիկս գիտեն ի՞նչ կայ:  
ԳԻՒԼՉՕՆՐԱ.-Ո՞չ հայրեկ:  
ՍՈՒԼԹ.-Բ.-Եթէ այդպէս է, ուրեմն գիտցիր, որ քեզ  
մարդու եմ տալիս:  
ԱՄԵԱ.- (ՄԵԿՈՒՍԻ). Ափեռս տղայ. Ճեռքիցս փախա-  
ԳԻՒԼՉՕՆ.-Հայրեկ. ի՞նչ ժոմանակ է, որ ես ամուսնա-  
նամ:

**ՍՈՒԼԹ.-Հ.**—Շատ լաւ ժամանակդ է. երեխայ խօ չես. ամեն բան գիտես, ամեն ինչ հասկանում ես: Քեզ մի այնպիսի վաճառականի եմ տալիս, որ թէ երիտասարդ է, թէ հարուսա և թէ կարողութեան տէր է:

**ԳԻՒԼՉ.**—Հայրիկ, չբարկանաս, ես մարդու գնացութեմ:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Տես, մի յիմարանար. ես միջնորդին խօսք տւի գնաց:

**ԱԾԵԱ.**—(*ՄԵԼԿՈՎԻ*). Փառք Աստուծոյ եկող տղան միջնորդ է եղել:

**ԳԻՒԼՉ.**—Ոչ հայրիկ. ես չեմ կամենում ամուսնանալ: ՍԶԻԼԹ.-Բ.—Լաւ, լաւ, նազ մի անի. գիտեմ, որ սրտով ուրախ ես:

**ԳԻՒԼՉ.**—Ոչ հայրիկ. ճշմարիտն եմ ասում, որ ես չեմ կամենում ամուսնանալ: Ուզում ես ինձ խիմք, սպանիք, միայն մի ամուսնացնի:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Ուրեմն դու ճշմարիտն ես ասում: Այդ ինչ յիմար խօսք է: Ի՞նչպէս թէ ամուսնանալ չես ուզում. տանը մնալով ու պառաւելով ինչ պիտի դառնաս:

**ԳԻՒԼՉ.**—(*Լալով*). ես մարդու գնալ չեմ ուզում:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Ինձ նայիր. մի գժւիք դու խօսելու ինչ իրաւունք ունես. երբ հայրդ քեզ ամուսնացնէ դու պարտաւոր ես հնազանդւել:

**ԱԾԵԱ.**—Ի հարկէ, Գիւլիհօրա. ինչ որ հայրդ ասում է, դու նրան լսիր: Հիմի որ քեզ մարդու են տալիս, դու պարտաւոր ես գնալ: Ել խօսելը աւելորդ է:

**ԳԻՒԼՉ.**—Հայրս թող ինձ սպանէ, բայց չամուսնացնէ:

**ԱԾԵԱ.**—Բայց դու խօսելու ինչ իրաւունք ունես:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Քեզ ասում եմ մի յիմարքանայ.. ես քեզ մի այնպիսի մարդու եմ տալիս, որի նմանը չես գտնիլ. դու ինչ ես կարծում:

**ԳԻՒԼՉ.**—Ասեային տուր այդ մարդուն, թող ես տանը մասմ:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Ի՞նչ ես դատարկ-դատարկ խօսում: Եթէ Ասեային ուզող լինի՝ նրան էլ մարդու կը տամ. հիմի քեզ են ուզում, և պէտք է որ առաջ քեզ ամուսնացնեմ:

**ԱԾԵԱ.**—Ի հարկէ որ այդպէս է:

**ԳԻՒԼՉ.**—Ես չեմ կամենում ամուսնանալ:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Այդ քո գործը չէ. Ի՞նչպէս կարող ես չամռամանալ: Հայրդ հրամայում է քեզ՝ ամուսնանալ—ամուսնացիր: Իսկ եթէ շատ էլ դէս ու դէն անես, ական շիցդ կը բռնեմ ու պատին կը մեխեմ: (Գիւլզօհրան լալիս է, իսկ Սովթան-քէկը բարկացած ման է գալիս, յետոյ մեղմացած). Աղջիկս, գուցէ գու կարծում ես որ քեզ մի վատ մարդու եմ տալիս. դու այսքանը լաւ իմացիր, քեզ մի այնպիսի տղի եմ տալիս, որ կարծես թագաւորի զաւակը լինի: Կարիճ տղայ, փողը շատ, կարողութիւնը մեծ, ուրեմն ես յիմմը եմ որ քեզ վատ մարդու տամ: Դու իմ աչքի լոյս միակ աղջիկն ես. միթէ ես քեզ կամբաղդացնեմ: Դու լսիր քո ծեր հօր խօսքն և յիմարութիւն մի անի:

**ԳԻՒԼՉ.**—(*Լալով*) Հայրիկ. Աստած վկայ ամուսնանալու բնաւ սիրա չունեմ: Ի՞նչ անեմ: Դու ինձ մի ամուսնացնի. թող տանը մնամ:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Աղջիկս. մի հակառակիք, հօրդ խօսքին հնազանդւիր, ապա թէ ոչ Աստած քեզ կամբաղդացնէ: Այս էլ իմացիր, որ իմ խօսքս խօսք է. ես այս մարդուն խօսք եմ աւել. այսօրվաղը նշանդ կտան, քեաբինը կը կտրեն, հարսանիքը կը լինի... մարդու կը գնաս. ամսանինդ էլ հարսանա, ինքը լաւ մարդ, տան ու երեխանց աէր կը լինես, ես էլ այս ծեր օրերիս մի քիչ

կը հանգստանամ։ Քեզ ինչ որ ասում եմ, զու  
իմ խօսքին լսիր։  
ԳԻՒԼՉ.-Հայր, եթէ ուզում ես որ ես ամուսնանամ,  
այս ժամանակ թող որ ուզածս մարդուն գնամ։  
ԱՍԵԱ.—(Վախից ու զարմանքից երեսը շուր է  
տալիս):  
ՍՈՒԼԹ.-Բ.—Աղջիկս, ով է քո ուզածը, ասա տես-  
նենք։  
ԳԻՒԼՉ.—Ինձ մեծ ցաւերի մէջ ձգեց,

Արշին մալ ալան.

Իմ սիրսու ու հոգիս մաշեց, —այրւում եմ։  
Օր ու գիշեր ուշը ու միտքս՝ —

Արշին մալ ալան.

Այդ է միայն երազանքըս, —այրւում եմ։  
Հէնց տեսնելիս քեզ սիրեցի, —

Արշին մալ ալան

Այս ու վախի մէջ հալւեցի, այրւում եմ։

ՍՈՒԼԹ.-Բ.—Աղջիկս, արշին մալ ալանը մվ է... (Մե-  
կուսի) գուցէ էն մօրաքրոջ հետ եկող տղան է։

ԳԻՒԼՉ.—Եթէ ես ամուսնանալու լինեմ, միայն նրան  
կը գնամ։

ՍՈՒԼԹ.-Բ.—Այդ ինչնը ես գուրս տալիս, յիմար աղ-  
ջիկ մի բազարի լակոտի հետ պիտի ամուսնա-  
նամ. թելագրութիւն ես, ինչ է։ Աստւած է վկայ,  
այնպէս կը հասցնեմ, որ առամերդ բերանդ  
կը թռփի. Սուլթան բէկի աղջիկը մի լակոտի  
վրայ սիրակարէ. բահ, բահ, բահ։ Հիմի իսա-  
ցայ թէ ինչու չես ուզում ամուսնանու. բայց  
լու իմացիր, եթէ այս յիմարութիւնը երկոր  
շարունակի, երգում եմ հօրս գերեզմանով  
քեզ այնպիսի մի հարստնիք անել կը տամ, մի  
այնպիսի հարստնիք՝ որ մէկ շունչով հոգիկ  
գուրս կըդայ. Ֆու քո այդ որտքունքով իմ  
պատիւ ես արտառորում։ Դու ինչ իրաւուն-

քով արշին մալ ալանի երեսին ես նայում։ Թհղ,  
մի թող այդ արշին մալչին իմ աչքիս երևայ,  
ես նրա վրայ այնպէս մի փամփուշտ կրակեմ,  
որ նրանից հետք անգամ չի մնայ։ Լաւ իմա-  
ցիր, որ ինձ Սուլթան բէկ կասեն, ես անպատ-  
ւութիւն չեմ կարող տանել, քեզ էլ կսպանեմ,  
նրան էլ կսպանեմ։

ԳԻՒԼՉ.—(Լալազին) Հայր, Աստւած վկայ սպասիր  
ինձ, որ հոգիս ազատւի։

ՍՈՒԼԹ.-Բ.—Պիտի սպասեմ։ Այս փափախը ինձ հա-  
րամ լինի, որ եթէ մի անգամ էլ արշին մալ  
ալանի անունը բերանդ առնես՝ քեզ կտոր-կտոր  
չանեմ։ Այսպիսի անպատւութիւն կը լինի, որ  
իմ աղջիկս լակոտ-լուկուտի վրայ սիրահարւի՛  
վեր, վեր կաց շուա, կորիր աչքիս առաջից. Կո-  
րիր, անպատիւ աղջիկ։ (Գիւլչօնրան գնում է,  
Ասեային) Արշին մալ ալանը երբ էր եկել այս-  
տեղ։

ԱՍԵԱ.—Աստւած վկայ չգիտեմ։

ՍՈՒԼԹ.-Բ.—Ի՞նչպէս թէ չգիտես. ստում և թաքցնում  
էլ ինձանից։ Դուք էլ կորէք այստեղից։ (Ասեա  
եւ Թէլլի գնում են). Ի՞նչ զարմանալի փորձանք  
եկաւ գլխիս։ Շանը մէկը գալիս է իմ դրանս  
և աղջկանս սիրտն է գրաւում. այսպէս էլ ան-  
պատւութիւն կըլինի. Հիմա եմ հասկանում թէ  
ինչու մօրքրոջ փոխարէն աղջկանս էր ուզում։  
Թող կորչի գնա, նրա մօրքուրն էլ չուզեցինք։  
Աղջիկս կամարեալ գժւել է. պէտք է շտապել  
ամուսնացնել ու գնա. եթէ ոչ այս գործից  
վերջը մի փորձանք դուքս կը գայ, եթէ Սիւլէյ-  
մանին տեսնեմ, պիտի տան. որ իմաց անէ Աս-  
կերին, որ գոյ աղջկանս փախցնէ, որսինետե  
ինչպէս երկում է, աղջիկս յօժար կամքով նրան

չպիտի գնա, իմ էլ բարկութիւնը կը բանէ ու  
կուտամ կսպաննեմ: (Գնում է):

11) Գիշօնրա. յետոյ Ասկեար

**ԳԻՒԼՉ.**—(Հալով զալիս տախտի վրայ ընկնում է  
կամաց մտնում է Ասկեարը Աղջին մաշու  
հագուստով. նրան տեսնելիս իսկոյն վեր է  
թռչում):

Շնուտ, իսկոյն այստեղից հեռացիր գնա, թէ  
չէ հայրս մեղ երկուսիս էլ պիտի սպաննէ. դէ  
շտապիր գնա:

**ԱՍԿԵԱՐ.**—Ի՞նչ կայ. ի՞նչ է պատահել:

**ԳԻՒԼՉ.**—Հայրս ինձ ուրիշին է տալիս. իսկ ես չեմ ու-  
զում գնալ: Նա իմացաւ, որ ես քեզ վրայ սի-  
րահարւած եմ. սաստիկ բարկացաւ ու ինձ էլ  
քեզ էլ պէտք է սպանէ:

**ԱՍԿԵԱՐ.**—Մի վախենար, Գիւլչօնրա, Աստուծով գոր-  
ծը ուրիշ կերպ կը կարգադրեի:

**ԳԻՒԼՉ.**—Շուտ գնա, ի սէր Աստուծոյ, թէ չէ քեզ ին  
աչքի առաջ կըսպաննէ:

**ԱՍԿԵԱՐ.**—Գնում եմ, Գիւլչօնրա, բայց Աստւած ողոր-  
մած է. մի վախենայ, ցտեսութիւն:

**ԳԻՒԼՉ.**—Տէր Աստւած, դու ինձ մահացրու, որ հոգիս  
ազատւի: (Գնում է):

12) Սուլթան-ըէկ. յետոյ Ասեա, Գիշօնրա եւ Թէպի

**ՍՈՒԼԹ. Բ.**—Աղջի Ասեա, Թէլլի, այստեկ եկէք. (մըս-  
նում են): Տեսնք, ես շուկայ եմ գնում. Գիւչօն-  
րային խրատեցէք, թող խելքը գլուխը հաւաքի,  
թէ չէ բոլորիդ էլ կը կոտորեմ: (Գնում է):

**ԱՍԵԱ.**—Հիմի մենք ի՞նչ անենք. միթէ մինք մեղաւոր-  
ենք, որ Գիւլչօնրան մի լակոտի վրայ սիրահար-

մէլ է: Աղջի, գնա Գիւլչօնրային այստեղ կան-  
չիր, տեսնում էք էդ աղջկայ յանդինութիւնը.  
ուղղակի հօր երեսին ասում է թէ սիրահարւած  
է արշին մալ ալանի վրայ: Այս աղջիկը կատա-  
րեալ փորձանք դառնաւ մեր գլխին (Գիշօնրան  
մտնում է, ընկնում թախտի վրայ):

**ԱՍԵԱ և Թէլլի.** (Միասին երգում են)

Բաւ է այսքան լաց, հառաչանք,  
Ինչիւ համար այս տանջանք,  
Մաշուն դու գերադասեցիր,  
Հօրըդ արհամարեցիր:

**ԳԻՒԼՉ.**— Զրկւած եմ իրաւունքից,  
Օգնութեան յոյն՝ ոչ ոքից,  
Վիճակս է յուսահատ, արտում  
Ինչպէս չի լսմ անդադրում:

**ԱՍԵԱ և Թէլլի.**—Անվայել է քեզ ախ ու վախ,  
Եղիր դու մեղ պէս ուրախ,  
Զւարթ նայիր դու ամենուն,  
Որ ունենառ լաւ անուն:

Եղիր դու մեղ պէս ուրախ,  
Զւարթ նայիր դու ամենուն,  
Որ ունենառ լաւ անուն:  
Անվայել է քեզ ախ ու վախ,  
Եղիր դու մեղ պէս ուրախ,  
Զւարթ նայիր դու ամենուն,  
Որ ունենառ լաւ անուն:

ՎԱՐԱԳՈՅՑ  
Անվայել է քեզ ախ ու վախ,  
Եղիր դու մեղ պէս ուրախ,  
Զւարթ նայիր դու ամենուն,  
Որ ունենառ լաւ անուն:  
Անվայել է քեզ ախ ու վախ,  
Եղիր դու մեղ պէս ուրախ,  
Զւարթ նայիր դու ամենուն,  
Որ ունենառ լաւ անուն:

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԶՈՐՅՈՐԴԻ

Ասկեարի տանը լու կահուսորւած մի սենեակ:

### 1) Ասկեար. յետոյ Գիւլօհրա

**ԱՍԿԵԱՐ.**—Ի՞նչ փորձանքներ բերի խեղճ Գիւլօհրայի գլխին: Խեղճ աղջիկ: Խնքը այնպէս է հաւատացած, որ իրան ուրիշի հետ են ամուսնացնում: Բայց զարմանալի հաստատամիտ աղջիկէ, յօժար կամքով երբէք չկամեցաւ ուրիշի հետ ամուսնանալ: Հիմի իր հօր խնդրանքով. մարդիկ եմ ուղարկել որ նրան փափ ցնեն: Ոչինչ. մի երկու ժամից յետոյ ամեն զաղտնիք կը բացւի: Այս ժամանակ աղջիկն էլ ուրախ կը լինի, եռ էլ, հայրն էլ: Միայն կամենում եմ որքան կտրելի է աղջկան շուտ տանեն, որ խեղճը ի զուր աւելի շտառապիտ: Բայց իմ կատարած գործս էլ զարմանալի էր. չամուսնացայ, չտմուսնացայ և վերջիվերջոյ այսպիսի խաղով տամուսնացայ: Եւ շատ լաւ արեցի: Աստւած լուսաւորէ Սիւլէյմանի հօր հողին. ինձ զարմանալի բան սովորացրեց: Այսպիսով հիմի գոնէ տեսսած ու սիրած աղջկանս հետ կամուսնանամ և աղջիկն էլ ինձ կը սիրէ... Գնամ տեսնեմ, մօրաքոյրս պատէրներս կատարել է թէ ոչ (Գնում է: Քիչ յետոյ դրան դրսից ծայներ է լսում. մի քանի տղերը Գիւլօհրային ներս են

գցում սենեակ ու դրտը փակելով զնում են: Գիւլօհրան լալով ընկնում է տախտի վրայ): ԳիկլԶ.—Օ՛չ, այս ինչ սարսափներ եմ կրում. ինձ բռնութեամբ ամուսնացնում են, ինձ բաժանում են իմ սիրածից և չգիտեմ մւտի են տալիս: Ես չիմ ուզում այս հարստութիւնն ու այս փարթամութիւնը: Ես իմ սիրածին եմ ուզում: (Նրեսը ծածկելով լալիս է):

Բաղդը բռնի իմ սիրեկանից բաժնեց ու թողեց մեն-մենակ ինձ: Անյոյս, աչքերովս փնտրեմ զուր, Ուր է օգնութիւն, ևր է նա, մւր:

Սպասում է ինձ վիշտը թագուն՝ Որ նա չիմացաւ ցաւն իմ հոգուն: Այժմը աչքերովս փնտրեմ զուր, Ուր է օգնութիւն, ևր է նա, մւր:

Ես այլևս այսպէս չեմ կարող շարունակել, էլ ոյժ չմնաց ինձանում: Լաւն այն է որ ինքո ինձ սպասեմ կամ խեղդեմ ու աղատւեմ: (Իր շալը ոլրում է, որ ինքն իրան խեղջէ, բայց այդ միջոցին արջին մալ ալանի ծայնն է լսում: զարմացած ականջ է դնում եւ այդ ծայնը նրան ուրախացնում է):

### 2) Նոյն եւ Ասկեար

**ԱՍԿԵԱՐ.**—(Բնմի ետեկից լսում է «Արջին մալ ալան» երգի ծայնը որից յետոյ Ասկեարը մտնում է եւ Գիւլօհրային ըարեւում): ԳիկլԶ.—(Զարմացած նայում է) Դժւ ես թէ ուրիշն է: ԱՍԿԵԱՐ.—Ես եմ, ես եմ Գիւլօհրա, հանգիստ եղիր: ԳիկլԶ.—(Լալով) Տեսնում ես գլխիս ինչեր բերին.

եթէ քիչ էլ ուշանայիր՝ ինքս ինձ խեղդած պիտի  
լինէի, բայց գու մըտեղից եկար այստեղ, քեզ որ  
այստեղ տեսնեն՝ կըսպանեն, եթէ հնարաւոր է  
փախչենք այսաեղից:

**Ա.ՍԿԵԱՐ.** — (ծիծաղելով) իմ տնից մւր փախչենք:

**ԳԻՒԼՉ.** — ինչ ես տսում, այս մւմ տունն է:

**Ա.ՍԿԵԱՐ.** — Սա իմ տունն է, որ յետոյ քո տունը  
պէտք է լինի:

**ԳԻՒԼՉ.** — Բնաւ չեմ կարողանում ըմբռնել: Ո՞վ էր ինձ  
փախցնողը:

**Ա.ՍԿԵԱՐ.** — Այդ մարդկանց ես էի ուղարկել:

**ԳԻՒԼՉ.** — Իսկ ես կարծում էի թէ հայրս թողել է, որ  
այդ վաճառականի մարդիկը գան և ինձ փախ-  
ցնեն:

**Ա.ՍԿԵԱՐ.** — Ի եռդիէ այդպէս է:

**ԳԻՒԼՉ.** — Ելի չհասկացայ, ի սէր Աստուծոյ ինձ հաս-  
կացրու թէ ոյս ինչ խաղեր են:

**Ա.ՍԿԵԱՐ.** — Լոիր, Գիւլչօհրա. քեզ վրայ սիրահարւած  
արջին մալչին էլ ես եմ. այն վաճառականն էլ  
ես եմ որին հայրդ քեզ կամենում էր տալ, ես  
կեղծ որշին մալչի դարձած, ինձ համար աղջիկ  
էի փնտրում, որ վերջ ի վերջոյ քեզ դառյ.  
Տօրիցդ ուղեցի, նա էլ աւեց, բայց հայրդ  
չէր իմանում թէ ես որշին մալ ծախող տղան  
եմ, որովհետեւ նա ինձ ոկրքից չէ տեսել:

**ԳԻՒԼՉ.** — (Նազանելով) Անիբն, բայ ինձ չէր ափ-  
սոսմամ, որ այսքան նեղութիւն պատճառեցիր:  
Քիչ էր մասմ եալրա ինձ սպանէր, վերջապէս  
ես կամենում էի ինքնառպան լինել... եթէ գի-  
տենայի քեզ չէի սիրի...

**Ա.ՍԿԵԱՐ.** — Բայց ոս կայ, որ մեր կիմիկւայ ուրախու-  
թինը մեր բոլոր կրած վշտերին որբում տա-  
նում է, այնպէս չը, իմ աննման Գիւլչօհրա.

**ԳԻՒԼՉ02.** — Այդպէս է:

**Ա.ՊԿԵԱՐ.** — Դէ, հիմի գնանք մէկ-մէկ բոլոր սենեակները  
ցոյց տամ, և մօրքըոչս էլ տեսնենք: ( նում են):

3.) Սուլթան բէկ, յետոյ Ասկեար:

**ՍՈՒԼԹ.Բ.** — Ելի հօր սիրուց. չկարողացայ հանգստանալ,  
ասացի գնամ տեսնեմ, աղջիկս գլխին մի փոր-  
ձանք չըերի, բայց մըտեղ են սրանք: Այտղերք,  
ով կայ այստեղ:

**Ա.ՍԿԵԱՐ.** — Բարկ Սուլթան բէկ. բարի եկամք:

**ՍՈՒԼԹ.Բ.** — (Զարմացած) Տղաս... գու Ասկեարն ես թէ  
արշին մալ ծախողը:

**Ա.ՍԿԵԱՐ.** — Ոչ բէկ. ես Հաջի-Մուրսալու աղայ Ասկեարն  
եմ, զբաղմունքով էլ վաճառական:

**ՍՈՒԼԹ.Բ.** — Ասում էի Է... միայն աչքիս այնպէս  
երկաց որ մօսու կանգնողը այն լակունն էր:

**Ա.ՍԿԵԱՐ.** — Այդ ո՞ր լակուրը:

**ՍՈՒԼԹ.Բ.** — Ոչինչ, արշին մալ ծախող մէկը կար:

**Ա.ՊԿԵԱՐ.** — Իմացայ: Դու ուզում էիր նրա մօրքոյըը  
առնել, նա էլ քո աղջին ուզեց, յետոյ դու  
բարկացար և նրան վանդեցիր, այնպէս չը:

**ՍՈՒԼԹ.Բ.** — Այնպէս է, բայց այդ բոլորը դու մըտեղից

գիտես:

**Ա.ՍԿԵԱՐ.** — Ի՞նչպէս չգիտենամ, քանի որ ես ինքս էի:

**ՍՈՒԼԹ.Բ.** — Ի՞նչ ես խօսում:

**Ա.ՍԿԵԱՐ.** — Այո, ես այնպէս արեցի, որ այդպիսով

առաջ աղջկան տեսնեմ, յետոյ ամուսնանամ:

**ՍՈՒԼԹ.Բ.** — Ճշմարիտ ես ասում:

**Ա.ՊԿԵԱՐ.** — Այս բոպէիս աղջիկդ կուգայ և կը հաստատէ.  
(Կանչելով). Գիւլչօհրա, այստեղ արի:

4.) Նոյնը եւ Գիւլչօհրա.

**ԳԻՒԼՉ.** — (Հօրը ղիմնելով). Տեսնում ես հայրիկ, թէ  
քո ասած եղաւ և թէ իմ տածը: Ասկեարը մեր

գլխին այս խաղը խաղալով քո բարկութեան և իմ վշտերիս պատճառը եղաւ. բոլոր մեղքը սրանն է. **ՍՈՒԼԹ.-Բ.**—Հիմք հասկացայ. շատ հնարագէտն ես եղել. քո հանգուցեալ հայրդ բնաւ այսպէս չեր: Ե՛, ինչպէս ես, լմւ եռ... աղջի, Գիւլչօհրա, մօտեցիր: (Դիւզօհրան մօտենում է եւ հօր ծեռը համըռուում). շատ լաւ, բայց շատ խօրամակն ես եղել. բա քո մօրքուրը թնչ եղաւ. և իսկապէս, նա քո մօրքուրն էր՝ թէ դա էլ մի խաղ էր:

**Ա.ՊԿԵԱՐ.-Բ.**—Ի՞չ, իսկապէս մօրքուրս է:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Եւ ինքն էլ այրի է:

**Ա.ՊԿԵԱՐ.-Պ.**—Այս, այրի է:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Դէ բեր. ես էլ նրան տռնեմ է:

**Ա.ՊԿԵԱՐ.-Բ.**—Բան չեմ տառմ. առ: Գիւլչօհրա, մի նեղութիւն կրիր և մօրքուջա կանչիր: (Դիւլչօհրան գնում է):

**ՍՈՒԼԹ.-Բ.**—Ես էլ նրան տռնեմ. նա այրի ես այրի, բժիշկն էլ ինձ խորհուրդ է տալիս, որ կին տռնեմ: Ես գիտեմ. բժիշկը եթէ մօրքուջդ տեսնէ, նրան էլ կասէ թէ մարդու դնա:

**Ա.ՊԿԵԱՐ.-Ա.**—Ես էլի, և երկու կողմից էլ աղդական կը լինենք. հիմի իմացմը թէ երկու կողմից աղդական լինելը թնչ է նշանակում:

**ՍՈՒԼԹ.-Բ.**—(Ժպտալով). Խմացայ, իմացմ ով խորամանկ:

### 5. Նոյնք, Գիւլչօհրա. Ձահան.

**ՍՈՒԼԹ.-Բ.**—(Ձահանին): Դէ արի էլի, առաջ արի: Տեսնում եմ քո այսքրոջ որդին թնչ խօրամանկն է եղել: Դէ, հիմի թնչ ես տառմ. մի հատ մոլլա, մի դուխ շաքար ու գործը պրճնի գնայ: Նաև տառմ եմ Ասկեարի և Գիւլչօհրայի, իմ ու քու հարսանիքները մի օրում կատարենք:

**ԶԱՀԱՆ-**

համուսնանամ ես նրա հետ, ով որ փողեր շատ ունի, (2) Ով որ փողեր շատ ունի, և հոգու ու ցաւեր չունի, (2) Փող ունեմ (2)

**ՍՈՒԼԹ.-Բ.**— էայ, կայ, (2)

**ԶԱՀԱՆ-** Փող ունես՝ ես քոնն եմ, } (2)  
Փող ունես՝ ծառադ եմ,

**ԲՈՂՈՐԸ.**— Փողը այնպիսի բան է, որի ոյժը շատ մեծ է, (2) Փողի ոյժը շատ մեծ է, ամեն բանի կը յաղթէ: (2)

Փող ունեմ, (2)

**ՍՈՒԼԹ.-Բ.**— էայ, կայ, (2)

**ԲՈՂՈՐԸ.**— Փող ունես՝ նա քոնն է,  
Փող ունես ծառադ է.

**ԶԱՀԱՆ.**— Ի՞նչ ասեմ. Աստւած շնորհաւոր անէ:

**ԲՈՂՈՐԸ.** Ամէն, ամէն:

**ՍՈՒԼԹ.-Բ.**— Եերիխերքը տանը մենակ մեացին, կանհանգստանան. զրկեցէք ձեր ծտառյին, որ Ասեային ու Թէլլիին այստեղ բերեն:

**Ա.ՊԿԵԱՐ.-Ա.**— Այս բռպէիմ գնամ ուղարկեմ: (Ճնում է):

**ՍՈՒԼԹ.-Բ.**— Աստւած վկայ, ուրախութիւնիցս կարծում եմ, որ բոլորովին երիտասարդացայ: (Արագ շընելով). Ասյինքն ձեր էլ չեմ, մի կտրին աղայ եմ: Կեցցեմ ես:

**Ա.ՊԿԵԱՐ.-** (Մտնելով). Կրկեցի:

### 6) Նոյնք եւ Սիւլէյման

**ՍԻՒԼԷՅՄ.**— Բարե ձեզ:

**ՍՈՒԼԹ.-Բ.**— Վահ, Սիւլէյման, Ասածու բարին, սիրելիս, քո այս բարեկամը թնչ խօրամանկ մարդ է եղել, ահագին փօրձանը բացեց մեր զլսին:

**ՍԻՒԼԵՑՅՄ.** — Այս, շատ խորամանկն է, և չգիտեմ ուսմաց է այդ բաները սովորել:

**ԱՍԿԵՅՐ.** — Ինչպէս թէ ումնից եմ սովորել. միթէ այս բոլորը սովորեցնողը դու չէիր. ահա, թող մօրքուրս ասէ:

**ԶԱՀԱՆ.** — Ճիշտ է, այս բոլոր խորամանկութիւնների հեղինակը Սիւլէյմանն է. նա սովորեցրեց:

**ՍՈՒԼԹ.** — Այսպէս ուրեմն, Սիւլէյման, ես քեզ այդ պէս չէի կարծում. դու այս բաները որտեղից ես սովորել:

**ՍԻՒԼԵՑՅՄ.** — Ես եմ հնարել, բէկ:

**ՍՈՒԼԹ.** — Այ քո գլուխը ապրի:

**ՍԻՒԼԵՑՅՄ.** — Լաւ. Գիւլչօհրան սա է:

**ԱՍԿԵՅՐ.** — Այն, սա է:

**ՍԻՒԼԵՑՅՄ.** — Իսկ իմ տեսած աղջիկը սրան չէ նման լուս:

**ՍՈՒԼԹ.** — Դու երեկ Ասեային ես աեսել:

**ՍԻՒԼԵՑՅՄ.** — Ասեան ով է:

**ՍՈՒԼԹ.** — Եղբօրս աղջիկն է:

**ՍԻՒԼԵՑՅՄ.** — (Ուրախ). Թէ որ այդպէս է, ես թնջու ամուրի մնամ: Արք մի հարսանիք էլ ես անեմ:

**ՍՈՒԼԹ.** — Ճիշտ ես արմաւ:

**ՍԻՒԼԵՑՅՄ.** — Ի հարկէ:

**ՍՈՒԼԹ.** — Տւեցի, առ:

**ԲՈԼՈՐԸ.** — Աստւած շնորհաւոր անէ, Աստւած շնորհաւոր անէ:

? Սոյնք, Ասեա, Թէլլի եւ Վէլի.

**ՍՈՒԼԹ.** — Ահա եկան, աղջի Ասեմ, եթէ քեզ այս տղին տամ, կը գնամաւ:

**ԱՍԵԱ.** — Կամուսնանավ ես նըա հետ՝ ով որ փողեր շատ ունի, (2)

Ով որ փողեր շատ ունի և հոգս ու ցաւեր չունի: (2)

**Փող ունիս:** (2)

**Կայ,** կայ: (2)

**Փող ունիս՝ ես քոնն եմ,** (2)

**Փող ունիս՝ ծառադ եմ:** (2)

**Փողը այնպիսի մի բան է, որի ոյժը շատ մեծ է,** (2)

**Փողի ոյժը շատ մեծ է, ամեն բանի կյաղթէ:** (2)

**Փող ունիս:** (2)

**Կայ,** կայ: (2)

**Փող ունիս՝ նա քոնն է,** (2)

**Փող ունիս՝ ծառադ է:** (2)

**ԱՍԵԱ.** — (Ամաշելլավ) Այն, կը գնամ:

**ՍՈՒԼԹ.** — Քաջ աղջիկ, դու Գիւլչօհրայից խելօք դուս եկար. լաւ, շատ լաւ:

**Վէլի.** — (Թէլլիի հետ միմեանց նայելուց յետոյ). Ա՛խ:

**ՍՈՒԼԹ.** — Այ աղայ, այդ լինչ վատ ախ քաշեցիր. քո դմբով ինչ է:

**ԱՍԿԵՅՐ.** — Ի՞նչ դարդ պէտք է ունենայ. Գիւլչօհրային ինձ տւիր, Ասեան Սիւլէյմանին տւիր, մօրաքրոջ դուս առար, հիմի Թէլլիին էլ տուր ծառային:

**ԲՈԼՈՐԸ.** — Ճիշտ է, ճիշտ է:

**ՍՈՒԼԹ.** — Աղջի Թէլլի, Վէլլիին կը գնամ:

**Թէլլի.** — Կամուսնանամ ես նըա հետ՝ ով որ փողեր շատ ունի, (2)

Ով որ փողեր շատ ունի և հոգս ու ցաւեր չունի: (2)

**Փող ունիս:** (2)

**Կայ,** կայ: (2)

**Փող ունիս՝ ես քոնն եմ,** (2)

**Փող ունիս՝ ծառադ եմ:** (2)

- ԽՈՒՄԲՔ.**— **Փողը** այնպիսի մի բան է, որի ոյժը  
շատ մեծ է, (2)
- Փողի** ոյժը շատ մեծ է, ամեն բանի  
կը յաղթէ, (2)
- Փող** ունես (2)
- Վէլի.**— **Կայ,** կայ. (2)
- ԽՈՒՄԲՔ.**— **Փող** ունես՝ նա քոնն է, (2)
- Փող** ունես՝ ծառադ է, (2)
- Թէլի.**— (Համարձակ) Այս կը գնամ:
- ՍԻԼՎՅՈՒ.**— Վէլի, Թէլիին կառնես:
- Վէլի.**— (Ամաշկոտ եւ յանկարծ) Այս կառնեմ: (ծի-  
ծաղում է):
- ՔՈՂՈՐԸ.**— Աստւած ջնորհաւոր անէ:
- ՍՈՒԼԹ.** Բ.— Լաւ, բաս երբ ոկտենք հարսանիքները:
- ՔՈՂՈՐԸ.**— Էսց այսօրւանից:
- ՍՈՒԼԹ.**— Բ.— Ուրեմն սկսենք. շարժւեցէք տեսնեմ:  
(Զոյզ զոյզ պարում են. սկզբում ծանր, յետոյ  
աւելի ու աւելի տրագ):

ՎԱՐԱԳՈՅՑ

Ա Ե Ր Զ

Մամուլի զանազան օրգաններում բարձրա-  
ցած մի անտեղի աղմուկ, պատճառ գարձաւ որ  
երգախառն այս պիէսը թարգմանենք, և տանք  
ընթերցող հասարակութեան ձեռքը:

Հեղինակը պարզ, անպաճոյն խոսքերով,  
բայց արևելցու սիրած և ճաշակաւոր գոյսներով  
հանդէս է բերում այն անել անցքը, որի մէջ ա-  
կամայ կուրութեան են մատնած մեր մահմե-  
դական հայրենակիցները և շատ մեղմ, իրան յա-  
տուկ նրբութեամբ, միացնում է իր ձայնը այդ  
խաւարի և աւանդութիւնների ճիրաններում տա-  
ռապող ժողովրդի վերածնութեան ձգտող առա-  
ջադէմ տարրերի ձայնին:

Պիէսի բնագրում ոչ մի քառ չկայ՝ որ վը-  
դովեցնէ մեր խիղճը, մի կոպիտ ակնարկ կամ  
մի անհաճոյ տեսարան՝ որ ստիպւած լինէինք  
զայրոյթից մի կողմ դարձնել մեր երեսը: Ամեն  
ինչ կատարւում է թուրք նահապետական ըն-  
տանիքի մէջն ու շուրջը՝ նահապետական պար-  
գութեամբ:

Այն կոպտութիւնները, որ թոյլ են տուել  
իրանց զանազան «թարգմանիչ»ներ և «ըէժիս-  
սօր»ներ այս պիէսի նկատմամբ, հասարակու-  
թեան առաջ ոչ մի արգարացում չունեն:

Մենք, մեր ոյժերի ներած չափով, աշխա-  
տեցինք բնագրին հարսզատ մնալ մեր թարգմա-  
նութեան մէջ:

Ժանօթութիւններ. — 1. Բնագրում իւլտքանչիւր  
գործողութիւն բաժանուած չէ տեսիլների. մենք բա-  
ժանեցինք՝ ներկայացողների դիւրութեան համար:

2. Բ. գործողութեան (եր. 26). և չորրորդ գործ.  
վերջին երգերը հեղինակը նոր է աւելացրել:

3. Այս պիեսի երգերի մի մասն է միայն ընա-  
զրում. միւսները կազմւած են զանազան թարգմանիչ-  
ների կողմից, պիեսը աւելի հետաքրքրական դարձնե-  
լու համար: Մ. նք ևս երգւած եղանակների համեմատ  
նոր խօսքեր զբինք, նրանց նորից խմբագրելով: Այդ-  
պիսով այդ երգերը դարձան աւելի հարթւած և աւելի  
իմաստալից՝ միաժամանակ պահելով իրանց նախկին  
նղանակները:



ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՆ. ԹԱՎԱՐԱԿ  
ՔԱՆԴԱՐԻՆ

1.034  
2 - 34